30 ՄԱՅԻՍ 1995. ԵՐԵՔՇԱԲԹԻ # 99 (853)

ԲԱՑԵՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Azg
AZG
SPECIAL FRANCE

Սաստիկ երկրաշարժ Սախալինում

Շաբաթ օրը Սախալինի Նեֆտեգորսկ ավանում տեղի ունեցած սաստիկ երկրաշարժի զոհերի թիվը երկուշաբթի առավոտյան հասել է 300-ի, երկվ հաղորդեց Ֆրանսադրես գործակալությունը: Սակայն ըստ Ռուսաստանի կառավարության կանխատեսումների, զոհերի թիվը կարող է անցնել 2000-ը: Եւս երեք հարյուր տուժածներ հասցվել են հիվանդանոց, իսկ շուրջ 3000 մարդ մնում է փլատակներում: BBC-ի հաղորդման համաձայն, ավանի 20 շենքերից 17-ը լիովին փլուզվել են:

Փրկության աշխատանքները շարունակվում են մեծ բուռնով: Ժամում մի քանի տասնյակ ուղղաթիռներ մոտենում են աղետի գոտուն, բերելով դեղորայք, տաք հագուստներ, արյան տվակներ, բժշկական անձնակազմ ու փրկարարներ, և իրենց հետ տանում վիրավորների: Փրկարարական աշխատանքները դժվարանում են փոթորկահողմի պատճառով: Հրդեհներից մեկ մասը դեռեւս չի հանգել: Երկուշաբթի երեկոյան հույսերը նվազում էին փլատակների տակ վերադարձողներին գտնելու ուղղությամբ:

Վարչապետ Չեռնոմիրդինից հետո աղետի հարցերով սկսեց օրերային զբաղվել նաեւ նախագահ Ելցինի գրասենյակը:

ԱՅՍ ՀԱՄԱՐԸ

Հատուկ՝ Ֆրանսիա

Այս համարը՝ «Հատուկ Ֆրանսիա», որ լույս է ընծայվում Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան եւ մեր բերթի համագործակցությամբ, դույզն հավակնությունը չունի ներկայացնելու Ֆրանսիան, ոչ իսկ հայ-Ֆրանսիական կապերը, կամ առագայի ծրագրերը: Այն պարզապես մի ակիթ է՝ հղացված դեսպանի՝ եռանդուն ու հմայիչ տիկին Ֆրանս դը Հարտինգի կողմից եւ իրականացված դեսպանատան մշակութային Ատաշ Պատրիկ Տոնապետյանի, մամուլի քարտուղար Վահագն Աբաբեկյանի, խորհրդական Արտաշես Դարբինյանի, մեր դիվանագետների, մտավորականների, լրագրողների եւ աշխատակիցների ջանքերով: Առիթ՝ զգալու, զգացնե՛լ տալու, մեկ անգամ եւս հիշեցնելու, թե որքան խորն է մեր զգացական կապը Ֆրանսիայի ու նրա ժողովրդի հետ, թե որքան ուսանելի բան կա այդ ամբողջի մեջ: Այդ կապը, ներ-ին այդ համակրանքը մենք մի անգամ եւս զգացինք այս համարը պատրաստելիս, ոչ միայն մեր աշխատակիցների մոտ, որոնց դիմել էինք, այլեւ Ֆրանսիայի արտգործնախարարության ու ներքգործնախարարության պաշտոնյաների, տեղեկատվական ու մշակութային տարբեր կենտրոնների պատասխանատուների մոտ, որոնց այցելեց մեր թերթի նախկին խմբագիրն այս համարի նյութերի համար Փարիզում պայմանավորվածություններ ձեռք բերելիս: Ֆրանսիան առանձնահատուկ նշանակություն ունի մեր երկրի ու ժողովրդի համար ոչ միայն իր արվեստներով, գրականությամբ, ֆիլմերով, Սորբոնով, Լուվրով, հայ վերջին թագավորի գերեզմանով, - Սարսելով, Լիոնով, միաբանական ու երազային Փարիզով: Այն առանձնահատուկ է նաեւ ոգու հարազատությամբ, անմիջականությամբ, մարդկայնությամբ: Եւ այս համարը պատրաստելիս մենք զգացինք, երբ փեցինք համարյա, որ այդ համակրանքն ու սերը փոխադարձ են, եւ պահն է արդյունավորվելու:

Հանդուգն այս համարի կրկնակի ծավալին, բազմաթիվ արժեքավոր նյութեր ու հոդվածներ դուրս մնացին, տարբեր հարցազրույցներ ու բրիգադներ չկարողացանք պարփակել: Եւ արդեն մեր նպատակը չէր ամեն ինչ մեկ համարում, մեկ անգամից տալ-վերջացնել: Սա պարզապես սովորական մի համար է, առաջին հերթով ծնված մի առաջնեկան համար, բայց հետո՛ւկ:

Առանց տնտեսական, առանց պատասխանատվությունների, Ֆրանսիան միաբանվել կլինի:

Mais, Oui !

Տնտեսական ու մշակութային բազմազանությունը Հայաստանի առագան է: Այդ բազմազանության մեջ էական է Ֆրանսիայի դերը, փորձը, օգնությունը: Մեզ համար հատկապես օրինակելի է Ֆրանսիական տնտեսության ինքնաբավության հաղթականությունը, Ֆրանսիայի ժողովրդի խնայողությունը, էկոլոգիապես մաքուր արտադրողականությունը: Եւ դեռ ուրիշ շատ բաներ: Մեր գաղափարակիցներն այնտեղ նախագահական վերջին ընտրություններում արժանի հաղթանակ տարան «երկրում իսկական բարեփոխումներ» կարգախոսի տակ, որին հետեւեց, հավատաց Ֆրանսիացիների մեծամասնությունը: Իսկական բարեփոխումներ նաեւ մեր երկրում՝ Հայաստանում: Դա իսկական հաղթանակ կլինի մեր ժողովրդի համար: Եւ դա հնարավոր է առաջիկա հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրություններում: Այն պարզապես կախված կլինի մեզ ընտրողներից:

Մինչ այդ՝ «Ազգում» Ֆրանսիային նվիրված համարը...

Mais, Oui ! Հարկավ:

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցություն

ՀԱՏՈՒԿ «ԱԶԳԻՆ»

France de Hartingh: "Résonance, le maître-mot des relations franco-arméniennes".

«Ռեզոնանս. հայ-ֆրանսիական կապերի բանալին», ասում է Ֆրանսիայի դեսպանը

Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆրանս դը Հարտինգը երեւանում իր գործունեությունը սկսեց 1992 թ. մարտի 18-ից, երբ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին հանձնեց իր հավատարմագիրը: Երկար դիվանագիտական ճանապարհ է անցել տիկին դը Հարտինգը, իր իսկ ասելով եղել է աշխարհի երկու-երեքում: Յոթ զավակների մայր է: Բացի ֆրանսերենից, տիրապետում է նաեւ անգլերենին, գերմաներենին, ռուսերենին, իտալերենին: Անմիջական է իր ելույթներում, սիրում է զրուցել տարբեր թեմաների շուրջ: «Ազգ» օրաթերթի այս համարն էլ նրա մտահղացումներից մեկն է: Ինչպե՞ս ծնվեց այս գաղափարը եւ ո՞րն է նրա նպատակը: Այս հարցերով էլ սկսեցինք մեր զրույցը դեսպան տիկին դը Հարտինգի հետ:

– Նմանն համարներ պատրաստելը, ընդհանրապես, ընդունված է աշխարհում: Ես կարծում եմ, որ այն հնարավորություն կտա մեր երկու երկրների միջեւ ավելի լավ ճանաչողական դաշտ ստեղծել: Իհարկե, Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ արդեն կա որոշակի ճշգրիտ լրատվություն, բայց ամենօրյա բաղերը, սովորաբար, բույլ են տալիս միավորել բեւեռական լրատվությունը, թե լրացուցիչը:

– Դուք Հայաստանում Ֆրանսիայի առաջին դեսպանն եք եւ արդեն 3 տարի աշխատում եք Երեւանում: Ես հիշում եմ Ձեր այն խոսքերը, թե հարկավոր է առնելով մեր երկու ժողովուրդների մտերմությունը, Հայաստանում ամեն ինչ վերաբերում է Ձեզ լինի ժողովրդի հոգս, կառավարության, թե ընդդիմության: Այսօր, երբ ամփոփելու լինեք Ձեր գործունեությունը, հարկադրես ո՞ր բաղադրամասերը կկարեւորեք:

– Դժվարանում՝ եմ առանձնացնել որեւէ բնագավառ: Երբ խոսելու լինեմ հաղթականության մասին, իմ կարծիքով, ինձ հաջողվել է խրախուսել դեղաբերի իմ դերակատարությունը: Ես կարողացել եմ բավականաչափ ճիշտ եւ օրյեկտիվ ներկայացնել Հայաստանի դրությունը Ֆրանսիայում: Ես իմ դերն եմ համարել կարծիս միջոց բարձրացնել Հայաստանի հաղթանակների հետ: Իրոք իրավաբան կարող եմ ասել, որ իրական համակարգում բավականաչափ առաջընթաց է արձանագրվել հարկադրես ճշտելու համար դեսպան-հաղթանակի հարաբերությունները. մի նորը հարց, որ զրույց մոտեցում է դա-



հանջում: Համագործակցությունը իրավական բնագավառում եղել է խիստ բազմազան: Տրամադրվել են Ֆրանսիայի Սահմանադրության եւ իրավական բարեփոխումների վերաբերյալ տարբեր տեքստեր, բնականաբար, ընտրության հնարավորությունը բաղելով Հայաստանի իշխանություններին: Այս առումով հետաքրքիր սեմինար կազմակերպվեց տեղական իշխանությունների եւ դեսպանության հարաբերությունների վերաբերյալ, որն ըստ երեւույթին արդյունավետ եղավ: Նաեւ Սահմանադրության մշակման համար: Աջակցություն է ցուցաբերվել տարբեր օրենքների մշակման գործում: Գիտության բնագավառում նույնպես համագործակցությունը առաջընթաց է ապրել, մասնավորապես աստրոֆիզիկայի, լազերային ֆիզիկայի եւ առողջապահության ճյուղերում: Առանձնապես դեմ է նշել կրթության եւ լեզվի ասպարեզը: Ստեղծվել են այսպես կոչված «երկլեզվյան» դասարաններ, որտեղ ոչ միայն իրականացվում է ֆրանսերեն լեզվի խորացված ուսուցում, այլեւ ֆրանսերեն դասավանդվում են մի շարք առարկաներ՝ ֆիզիկա, հիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն: Ընդհանուր առմամբ, մեր ուսադրությունից ոչինչ դուրս չի մնացել, եւ բոլոր բնագավառների ուղղությամբ ինչ-որ բան արվել է: Համագործակցության հայեր են արվել նաեւ էներգետիկայի բնագավառում, օրինակ անցյալ տարի «ծնվեց» «Գազ դը Ֆրանսի» եւ «Հայգազի» զավակը «Արմֆրանսգազ»: Ատոմակայանի հարցում օգնելու ձգտումը Ֆրանսիայի կողմից մեծ է եւ, սակայն այդ հարցը ոչ միայն տնտեսական է, այլեւ քաղաքական, եւ դեմ է ճիշտ գնահատել Ֆրանսիայի մոտեցումն այդ խնդրում:

Տես # էջ 3

ՄԵԾԱՄՈՐ

Ավարտվեցին ատոմակայանի շահագործման նախնական աշխատանքները

ԳԱՌԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.

Հայկական ատոմակայանի վերագործարկման ուղղությամբ ընթացող երկամյա աշխատանքների եզրափակման կապակցությամբ Հայաստանում էր գտնվում ռուս ատոմագետների դեսպանությունը: Այդ առիթով մայիսի 27-ին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որին մասնակցում էին փոխվարչապետ Վիգեն Չիթեչյանը, Էներգետիկայի եւ վառելիքի նախարար Միհրն Շիրմանյանը եւ Ռուսաստանի «Ռոսեներգոատոմ» կոնցեռնի փախնախագահ Բորիս Անտոնովը: Փոխվարչապետը լրագրողներին տեղեկացրեց, որ ատոմակայանի երկրորդ Էներգաբլոկի նախաշահագործման կապակցությամբ սպասվել են նախագծակոնստրուկտորային, նորագույն վերականգնողական աշխատանքներ, պատրաստ է եզրափակիչ հաշվեկշիռը սեպտեմբեր հետագոտությունների վերաբերյալ: Մասնակցությունը ունեցել են հայ եւ ռուս մասնագետներ ԱԷԿ-ի տարբերումների համակարգի պատրաստության վերաբերյալ: Նշվեց նաեւ, որ վերագործարկման աշխատանքային խումբը ռուս մասնագետների հետ համատեղ աշխատում է լիակատար բեռնվածությամբ: Էներգաբլոկում ամփոփված է աշխատանքային երկու, ռեակտորային արտաքին մասում երեք հերթափոխ: Կատարված աշխատանքների հիման վրա հունիսին երկրորդ Էներգաբլոկում կիրակացվի վառելիքի բեռնում, ինչը սկիզբ կդնի ատոմակայանի վերագործարկման առաջին փուլին: Էներգետիկայի եւ վառելիքի նախարար Միհրն Շիրմանյանը հայտնեց, որ ԱԷԿ-ի մեկ էներգաբլոկի աշխատանքը դիտվում այսօր հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալի կեսը, իսկ ենթադրվում ոչ հանգստյան տարեկեսից 30 տոկոսը:

Փոխվարչապետ Վիգեն Չիթեչյանի խոսքերով, ատոմակայանի հիմնական արդյունքը մշտապես գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում: Վերագործարկումից հետո անընդհատ կատարելագործվելու է նրա աշխատակազմը, բարձրացվելու է անվտանգության կարգապահությունը եւ դրդիսիպլինը: ■

ԲՈՍՆԻԱ

Արտգործնախարարը զոհվեց Խորվաթիայի սերբերի կրակից

ՍԱՐԱԵՎՈ, 29 ՄԱՅԻՍ. ՖՐԱՆՍՊՐԵՍ. Կիրակի օրը Խորվաթիայի սերբերը գնդակոծեցին Բոսնիայի արտգործնախարար Իզետ Լյուբիյանկիչի ուղղաթիռը եւ տապալեցին նրան: Մինչդեռ Բոսնիայի սերբերը նույն օրը շարունակեցին պատանդներ վերցնել ՄԱԿ-ի «կապույտ սաղավարտներից» եւ զինվորական դիտորդներից, պատանդների թիվը երեկոյան հասցնելով 280-ի:

Միաժամանակ հաղորդվում է, որ բոլոր ռուս զինվորականներն ազատ են արձակվել: Ֆրանսիական «Ֆոս» ավիակիրը երեկ Տուզլայից մեկնեց Բոսնիա: Բրիտանիան եւս լրացուցիչ ուժեր նշանակի եւ իր խաղաղապահների թիվը 3400-ից կհասցնի 5000-ի: ԱՄՆ-ը իր հերթին Ադրիատիկ ծովով է ուղարկել «Ռուզվելտ» ավիակիրը եւ 3 ռազմանավ 2000 հետեւակայիններով: Ֆրանսիայի վարչապետ Ալեն Ժյուպեն երեկ հեռուստալրատվությամբ հայտարարեց, որ եթե ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը չհամալրվեն, հարկ կլինի դուրս բերել ֆրանսիական զորաբաժինը: Նա առաջարկեց Բոսնիայում ստեղծել ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի արագ արձագանքման ուժեր:

Ժողովրդավարական կուսակցությունը հաղթեց Իսպանիայի ընտրություններում

ՍՈՂՐԻԴ, 29 ՄԱՅԻՍ, ՖՐԱՆՍՊՐԵՍ. Ժողովրդավարական կուսակցության պատգամավորականները կիրակի օրը հաղթեցին Իսպանիայի տեղական ու շրջանային ընտրություններում, առավելության հասնելով 13 շրջաններից 11-ում: Վերլուծաբանների կարծիքով, կուսակցությունը կարող է առաջիկա օրենսդրական ընտրություններում իշխանությունը նվաճել 13 տարի սոցիալիստների կառավարությանն ընդդիմանալուց հետո:

Շիմոն Պերես. «Գոլանը սիրիական հող է»

ԹԵԼ ԱՎԻՎ, 29 ՄԱՅԻՍ, ՖՐԱՆՍՊՐԵՍ. Կիրակի օրը «Լ „ոս Միաոռնոս» թերթում հրապարակված հարցազրույցում Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը հայտարարեց, թե Գոլանի սարահարթը «սիրիական հող է»: Միաժամանակ իսրայելացիներն ու պղեստինցիները երեկ Ռաբաթում ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթի եւ Շիմոն Պերեսի բանակցություններից հետո հրապարակած հայտարարությամբ հավաստել են մինչեւ հուլիսի 1-ը մերձավորարեւելյան հաշտության բանակցությունները վերսկսելու իրենց վճռականությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԵՐԵՎԱՆ

Ընդդիմությունն ընդդեմ եթերի մենաշնորհի

«Ինչպես գիտեք, ասված է հայտարարությունում, այս տարվա հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով լուծվելու է այն հարցը, թե ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորած ՀՀ ԳԽ-ի Սահմանադրական հանձնաժողովի նախաղահատված սահմանադրության նախագծին ժողովուրդը հավանություն տալի՞ս է, թե՝ ոչ:

Ժողովրդավարության տարական պահանջներից կարևորագույնը առկա տարբերակների մեջ՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ», ընտրողների ազատ կողմնորոշվելու իրավունքն է. դրա համար «ԱՅՈ»-ի եւ «ՈՉ»-ի կողմնակիցները պետք է ապահովված լինեն բարոյության հավասար հնարավորություններով:

Ակնհայտ է, որ պետական հեռուստատեսությունը այսօր զբաղվում է ժողովրդի ինքնությանն առաջադրված երկու տարբերակներից մեկի օգտին միակողմանի քարոզարշավով: Նման դիրքորոշումը անազնիվ է, ապօրինի եւ հակասում է ժողովրդավարության անհրաժեշտ նախադայմանի՝ ընտրության ներկայացված կողմերին հավասար հնարավորություններով ապահովվելու սկզբունքին»:

Հայտարարությունը ստորագրած ութ քաղաքական կազմակերպությունների ղեկավարները գտնում են, որ հանրաքվեի ներկայացվող հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը արտահայտ տարբերվում է «չեզոքությունից հրաժարված իշխանությունների դիրքորոշումից», դատապարտում են իշխանությունների հակաժողովրդավարական վարվելակերպը՝ մասնակցությունը հանրաքվեի դրված հարցին որպես կողմ եւ պահանջում են պետական լրատվական միջոցների, մասնավորապես ռադիոյի եւ հեռուստատեսության միջոցով կազմակերպվող հաղորդումների ժամանակի ուղիղ կեսը հատկացնել իրենց սահմանադրության ներկայացվող նախագծին «ՈՉ» ասելու կողմնակից քաղաքական կազմակերպություններին:

Նույն կազմակերպությունները հանդես են եկել մեկ այլ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում է, թե ժողովրդին պարտադրվում է ընտրել ոչ պրոֆեսիոնալ խորհրդարան, որը հանրապետության նախագահին եւ գործադիր իշխանություններին հզոր լծակներ է տալիս պառլամենտը կախման մեջ պահելու իրենցից: Այս ձեւով վարչախումբը փորձում է պահպանել իր իշխանությունը եւ խուսափել պատասխանատվությունից: «Ելնելով վերոհարդյալից եւ ընդունելով մեր պատասխանատվությունը ժողովրդի առջեւ, ասված է հայտարարության մեջ, մեր պետության կայացման հարցում, համոզված լինելով, որ հուլիսի 5-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների եւ հանրաքվեի ժամանակ մեր դիրքորոշումը լինելու է ժողովրդի մեծ մասի համար կողմնորոշիչ, ութ կուսակցությունները հայտարարում են.

«1. Յուրաքանչյուր քաղաքացու պարտք է անմիջականորեն մասնակցել հուլիսի 5-ին կայանալիք սահմանադրության հանրաքվեին եւ Ազգային ժողովի ընտրություններին:

2. Հանրաքվեին մասնակցելով պետք է ՈՉ ասել սահմանադրության այս նախագծին:

3. Այս իշխանությունների գործունեության իրական գնահատականը կլինի հուլիսի 5-ին Ազգային ժողովի ընտրություններում ընտրողների վճռական ՈՉ-ը վարչախմբի հիմը հանդիսացող ՀՀՇ եւ արբանյակ կուսակցություններին ու նրանց ներկայացուցիչներին, որոնք հանդես են գալիս «Հանրաքվեություն» անվան տակ: Հենց դա էլ երաշխիք կհանդիսանա ապագա իշխանությունների պատասխանատվության հիմք ստեղծելու համար:

4. Ազգային ժողովը պետք է լինի պրոֆեսիոնալ: Ընտրողները պետք է ձայն տան այն կուսակցություններին ու նրանց ներկայացուցիչներին, որոնք Ազգային ժողովում կգործեն հավատարիմ այդ սկզբունքին»:

ՍՈՍԿՎԱ

ՀՅԴ Բյուրոյի լիագումար ժողովը

ՀՅԴ Բյուրոյի մամլո ծառայությունից հաղորդում են, որ մայիսի 19-25-ը ՀՅ Դաշնակցության Բյուրոն Մոսկվայում գումարեց հերթական լիագումար ժողովը, որը ընդունել է ՀՅԴ կազմակերպական շրջաններին, ազգային կյանքին եւ կուսակցության գործունեությանն առնչվող հարցեր:

ՀՅԴ Բյուրոն ընդունել է 1994 թ. դեկտեմբերի սկզբի ծերբակալություններին, ՀՀ նախագահի դեկտեմբերի 28-ի ելույթի, ՀՅ Դաշնակցության արգելման, կուսակցության կենտրոնների փակման, նրա մամուլի խափանման, առա Գերագույն դատարանի որոշմամբ կուսակցության գործունեության կասեցման հետեւանքով ստեղծված կացությունը: Ժողովը, ինչպես ասված է ՀՅԴ Բյուրոյի մամլո ծառայության հաղորդագրության մեջ, դատապարտել է «քաղաքական բացահայտ շարժառիթներով իրականացված անօրինական քայլերը, շինծու մեղադրանքների հասատումն ապահովելու նպատակով բռնությունների գործադրումը, իրավական միջազգային հանրահայտ կանոնների խախտումները, բանտարկյալների մարդկային տարական իրավունքների ոտնահարումը», ինչը «հանգեցրեց Արտավազդ Սանուկյանի ողբերգական մահվան»: ՀՅԴ Բյուրոն վերստին հաստատել է, որ ՀՀ նախագահի «հերթական ամբաստանություններն ու մասնավորապես 1995թ. մայիսի 18-ին ՀՀ Գերագույն խորհրդում հնչած անհեթեթ զրպարտությունները ՀՅ Դաշնակցությունը քաղաքականապես չեզոքացնելու եւ այն ազգային կյանքից օտարելու նպատակ են հետապնդում»:

Բյուրոյի լիագումարը մտահոգություն է հայտնել նաեւ հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունները եւ Սահմանադրության հանրաքվեն հակաժողովրդավարական պայմաններում անցկացնելու ՀՀ իշխանությունների քայլերի կապակցությամբ:

Ոչ որ Իրանի հայերի անունից

Հայկական ժողովրդային միությունը եւ «Արաֆ» ամսագիրը Թեհրանում հանդես են եկել համատեղ հայտարությամբ, որը վերնագրել են «Մի նոր բաստերագրություն եւս՝ բեհրանահայ ժողովրդի անունից»:

Հայտարարության մեջ ասված է, որ «բեհրանահայության շահերին չհամընկնող մի քայլով» մայիսի 26-ին ժողովրդին հրավիրել են հոգեհանգստյան արարողության «ամիսներ առաջ մարդասպանության եւ միջազգային քրգրիզնեսի մեղադրանքով ձերբակալված դաշնակցության եւ նրան կապվող «Դրո» կառույցի մեկ անդամի համար, որ վերջերս մահացել է Հայաստանի ՆԳՆ ենթակա հիվանդանոցում»:

Հայտարարության հեղինակներն իրենց պարտականությունն են համարել բերել հետեւյալը. թե «ա Ոչ մի խմբակցություն կամ կուսակցություն իրավունք չունի իրանահայ համայնքի անունից խոսել եւ իր նպատակներն ու դիրքորոշումները վերագրել նրան: բ. Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու ու հայկական մարգարմակուրային կառույցները չդիտի որեւէ կուսակցության քարոզչության բեմ հանդիսանան: գ. Թեհրանի հայոց բեմի Թեմական խորհուրդը Հայաստանյան հարցերին միջամտելու փորձեն, պետք է զբաղվի բեհրանահայության հուզող խնդիրներով»:

ՈՒՍԿՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակչության ե տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրատ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբ. 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱՍՈՐ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562[illegible]33
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածումը ՊԱՏՈՒ ԴԱԼԼԱԲԵՄԻ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635,
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՍՐՅԱՊԵՏԱԿԱՆ

Ֆրանսիան եւ Հայաստանը համագործակցում են Եվրամիության շրջանակներում

Հայ-ֆրանսիական միջպետական համագործակցության հիմքը դրվեց 1992 թ. փետրվարի 24-ին, երբ երկու երկրների միջեւ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: Դրան հետեւեց նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի այցը Փարիզ, որ եւ 1993 թ. մարտի 12-ին ստորագրվեց «Համաձայնության, բարեկամության եւ համագործակցության մասին» միջպետական ոլորտանագիրը: Այն, Հայաստանի Գերագույն խորհուրդը վավերացրեց 1993 թ. սեպտեմբերի 27-ին, իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովը 1994 թ. դեկտեմբերի 28-ին, որից հետո միայն դարձավ գործադիր ուժի մեջ: Ինչպես նշեց ՀՀ ԱԳՆ իրավաբանական գրասենյակի վարչության պետ Շահեն Ավագյանը, դրույթանագիրը նախատեսում է համագործակցություն միջազգային կազմակերպությունների շրջանակներում, միջխորհրդարանական, տնտեսական, գիտական, տեխնիկական, կրթության եւ մշակույթի բնագավառներում: Նրա կարծիքով, այն, որ այսօր նորմալ հարաբերություններ են զարգանում մեր երկու երկրների միջեւ, կախված է նաեւ այս դրույթանագրից, որը քաղաքական մեծ իմաստ ունի:

Անցած մի քանի տարիների ընթացքում ստորագրվեցին նաեւ միջգերատեսչական մի քանի այլ փաստաթղթեր:

1993 թ. մարտի 16-ին ստորագրվեց փոստային համագործակցության համաձայնագիր, ուղիղ փոստային կապ գործելու վերաբերյալ, իսկ 1995 թ. մարտի 22-ին վարչական համաձայնագիր ստորագրվեց Հայաստանի եւ Ֆրանսիայի ներքին գործերի նախարարությունների միջեւ: 1994 թ. ապրիլի 19-ին միջգերատեսչական հուշագիր ստորագրվեց ստանդարտացման, չափաբանության, որակի, սերտիֆիկացման եւ վարձակալման բնագավառում համագործակցության վերաբերյալ: 1995 թ. մարտի 9-ին արձանագրություն ստորագրվեց Հայաստանի եւ Ֆրանսիայի խորհրդարանների համագործակցության մասին:

Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցությունը զարգացավ հիմնականում Եվրամիության շրջանակներում: 1992 թ. ապրիլի 28-ին Հայաստանը միացավ դեռեւս 1989 թ. դեկտեմբերի 18-ին Եվրամիության շրջանակներում ստորագրված տնտեսական համագործակցության մասին համաձայնագրին: Հայաստանի Էկոնոմիկայի նախարարության միջպետական տնտեսական դրույթանագրերի բաժնի պետ Վարդան Սարգսյանի ասելով, այդ համաձայնագրով Հայաստանին տրամադրվում է առավելագույն բարենպաստ գործունեության ռեժիմ: Այսինքն, Եվրամիությունը Հայաստանի հետ տնտեսական համագործակցության մեջ այնպիսի դրամաններ է տրամադրում, ինչպիսին տրվում է երրորդ պետությանը:

Այդ արտոնությունների մեջ բացառություն է կազմում միայն տեքստիլ արդյունաբերությունը, որի վերաբերյալ Եվրամիությունը առանձին համաձայնագրեր է կնքում բոլոր դեպքերի հետ: Հայաստանին տրամադրվել է հատուկ վերաբերմունք:

Այժմ Էկոնոմիկայի եւ արտաքին գործերի նախարարությունները աշխատում են կապիտալ ներդրումների դրամաշնորհների եւ փոխադարձ խրախուսման մասին համաձայնագրի մշակումը: Դրա հիմնական էությունն այն է, որ կողմերը խրախուսելու են կապիտալ ներդրումները եւ հնարավորություն են տալու ներդրումներից ստացված շահույթները իրենց երկրի տարածքներից արտահանել: Բացի այդ, կողմերը նաեւ երաշխավորելու են, որ ադեսների, կոնֆիսկացների եւ հեղաշրջման դեպքում կփոխհատուցվեն ներդրումների կրած ամբողջ վնասը: Էկոնոմիկայի նախարարությունը նախատեսում է երկակի հարկումից խուսափելու եւ մասնային հարցերի վերաբերյալ եւս երկու համաձայնագիր: Առանձնապես աբիսոյժ չի կարելի համարել հայ-ֆրանսիական առեւտրական հարաբերությունները: Մասնագետների կարծիքով, Ֆրանսիայի եւ Հայաստանի առեւտրական դրամաշնորհներն ու առաջարկները չեն համապատասխանում իրար:

Ընդհանուր ներմուծման մեջ Ֆրանսիայից ներմուծված ապրանքները կազմում են 2,5 տոկոս, իսկ Հայաստանից արտահանված ապրանքների մեջ Ֆրանսիան կազմում է 0,5 տոկոս:

Եթե խոսենք թվերի լեզվով, ապա 1993-ին Ֆրանսիա-Հայաստան ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 3 մլրդ 54 մլն. դրամ, 1994-ին 3 մլրդ 105 մլն դրամ (մոտավորապես 10 մլն դոլար): Ընդորում, 1994-ին ներմուծված 2 մլրդ 941 մլն դրամից 2 մլրդ 294 մլն-ը եղել է մարդասիրական օգնություն:

Բնական է, որ մեր երկու երկրների տնտեսական համակարգերը դեռեւս միմյանց հետաքրքրելու եւ համապատասխանեցնելու տեղ ունեն, այդ պատճառով էլ բերեւս, շատ ժամանակ կպահանջվի, որպեսզի ինչպես քաղաքական, մշակութային ու կրթական, այնպես էլ առեւտրական բնագավառում ակտիվ գործունեության ծավալվի:

ՎԱՀԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբեջանական սոցիալ-դեմոկրատները՝ Ղարաբաղում

Մայիսի 27-ին «Սոցիալ դեմոկրատները հանուն խաղաղության» ծրագրի հիմնադրույթների իրականացման նպատակով Ստեփանակերտ էր ժամանել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի միջազգային դատավիրակությունը, որի կազմում էին Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներ Զաղդուս Ալիզադեն, այդ հանրապետության ՀԽԱ նախագահ Առզու Արդոլաեւան, Շվեդիայի ՀԽԱ համակարգող, Ալոֆ Պալմեի հիմնադրամի անդամ Գունար Լասսինարան, Վրաստանի ՀԽԱ համակարգող Ալեքսանդր Ռուսեցկին, նույն կազմակերպության Հայաստանի նախագահ Ալանիս Բարանդուը, դաշտանական այլ անձիք:

Այցելության հիմնական նպատակն էր նպաստել դարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորմանը, երկու ժողովուրդների միջեւ փոխվստահության հաստատմանը եւ ռազմագերիների ու պատանդների փոխանակման գործընթացի արագացմանը: Պատվիրակության անդամներին ընդունեցին ԼՂՀ Գեր-ի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբայանը, նախարար Արկադի Ղուկասյանը, «Հելսինկյան նախաձեռնություն 92»-ի Լեռնային Ղարաբաղի կոմիտեի համակարգող Կարեն Օհանջանյանը: Հանդիպումից հետո հյուրերն այցելեցին Ստեփանակերտում գտնվող ադրբեջանական ռազմագերիներին եւ զոհունակություն հայտնեցին նրանց կյանքի դայմաններից:

Ինչպես ասաց Ադրբեջանի ՀԽԱ նախագահ Առզու Արդոլաեւան, հայկական կողմին հաջողվեց ձերբազատվել բենամու կերդարից եւ այսօր նրա խոսքերով հայերը ադրբեջանցիներին բենամի չեն համարում: «Նույն նպատակն է հետապնդում նաեւ մեր կազմակերպությունը», նշեց տիկին Արդոլաեւան, սակայն մի շարք օբյեկտիվ դաշտառներով մենք հանդիպում ենք մեծ դժվարությունների: Նախ ԼՂ հայերին օգնում է հաղթող կողմի հոգեբանությունը: Ադրբեջանական ժողովուրդի դեմ է համակերպվի առայժմ պարտվող կողմի հոգեբանությունը:

Տիկին Արդոլաեւան հաստատեց հակամարտության զոհերը դուրս ԱՊՀ երկրներում ապրող հայազգի քաղաքացիների ադրբեջանցիների կողմից իրականացվող առեւանգումների փաստը: Ադրբեջանի ՀԽԱ անդամները նրա խոսքերով ներկայումս միջոցներ են ձեռնարկում այդ հանցագործության կատարողներ բացահայտելու եւ հակամարտությանը առնչություն չունեցող հայազգի գերիներին ազատելու համար:

Մեկնաբանելով վերջերս Ադրբեջանի Իմիշլիի շրջանում տեղի ունեցած տխուր միջադեպը, երբ ծեծի ենթարկվեցին ու քարկոծվեցին Գերմանիայի Բունդեսթագի անդամ Դիտրիխ Շոդելինգը եւ Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Զաղդուս Ալիզադեն, վերջինս մասնավորապես ասաց. «Իմիշլիի շրջանում տեղակայված փախստականների ճամբարում տեղի ունեցած միջադեպը, իմ համոզմամբ, կապված է Ադրբեջանում նախընտրական պայքարի յուրահատկությունների հետ: Ամեն մի ճամբարում կա փախստականների կազմակերպված մի խումբ, որ սադրանքներ է կազմակերպում Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունների գործիչների դեմ փախստականների հետ նրանց շփումները ձախողելու նպատակով»:

Պատվիրակության անդամների հետ հանդիպման ընթացքում դաստանների ու ռազմագերիների հարցերով ԼՂՀ պետհանձնաժողովի անդամ Ալբերտ Ռոկանյանը հավաստիացրեց, որ դարաբաղյան իշխանությունները որպես բարի կամքի արտահայտություն, բազմիցս միակողմանիորեն ադրբեջանական իշխանություններին են հանձնել տասնյակ գերիների ու պատանդների: Մինչդեռ պաշտոնական Բաքուն առայսօր դատապարտյալների չի դիմում, ինչը չի նպաստում երկու ժողովուրդների միջեւ փոխվստահության ամրապնդմանը: Ա. Ռոկանյանը կոչ արեց Ադրբեջանի ՀԽԱ-ին ակտիվացնել իր գործողությունը այդ ուղղությամբ:

Ն. Գ.

digitised by A.R.A.R.@

«Ռեզոնանս. հայ-ֆրանսիական կապերի բանալին», ասում է Ֆրանսիայի դեսպանը

Սկիզբը էջ 1

Կարելի է հիշեցնել, որ Ֆրանսիայի միջոցով մի քանի փոքր էլեկտրակայաններ են տեղադրվել Հայաստանում: Նաև մի շարք գյուղատնտեսական ծրագրեր են իրականացվել ՏԱՍԻՍ-ի միջոցով, որը համաեվրոպական ծրագիր է, և Ֆրանսիան իրեն եվրոպական դեսպան, շատ է աջակցել նրա նախագծերի իրականացմանը. լինի դա գյուղատնտեսության ոլորտում, թե հիդրոէլեկտրակայանների կառուցման սխեմաների մշակումը, թե վարչական կառավարման դպրոցի ստեղծումը և այլն: Տնտեսության բնագավառում, դժբախտաբար, չկարողացանք այնքան առաջ գնալ, որքան կցանկայինք: Դա էլ շատ բնագավառների ամերիկացմամբ: Ֆրանսիան օգտագործե՞լ է արդյոք իր բոլոր հնարավորությունները, որպեսզի Հայաստանում առավելագույն չափով ներկայացվի ֆրանսիական մշակույթը:

– Դժվարին հարց է, և կարծում եմ, պետք է դատաստանել երկու մակարդակով միջոցների և ծրագրերի: Կան մշակույթի բնագավառներ (օրինակ կինոն), որտեղ գաս միջոցների առումով անհնար է դպրոցներ: Չենք կարող դպրոցներ, կամ չենք կարող խանգարել, ամերիկյան կինոնկարների տարածմանը: Հեռատեսությունն ու ռադիոն ևս ամերիկյան ադրեալակերպը տարածելու հզոր զենք են: Ինչ վերաբերում է հեսարհրական հասկանարությունները կային նույն ճամբարում գտնվող բեկնածուների միջև: Երկրորդում արդեն ավելի շատ հասկություն կար: Այս ընտրությունների ընթացքի մեջ նոր երևույթն այն էր, որ բեկնածուները վերադարձ ընթացման մթնոլորտում էին վարում իրենց ընտրական պայքարը: Դա է ժամանակակից ժողովրդավարության դրսևորումը, երբ բեկնածուն հասկանում է, որ իր մրցակիցը նույնպես կարող է իրավացի լինել և ինչու ոչ նախագահ դառնալուց հետո կարող է օգտագործել իր մրցակցի առաջարկությունները:

Ընտրություններն անցան առողջ և շատ հեսարհրիր մթնոլորտում: Ինչ վերաբերում է նոր նախագահի որդեգրած քաղաքականությանը, ամենակարևոր և գլխավոր խնդիրը Ֆրանսիայի համար սոցիալական հիմնահարցերն են: Խնդիրն այն է, որ միջին Ֆրանսիացին գնալով ավելի ու ավելի է աղքատանում, և սոցիալական դիրքերը չկան: Ինչ վերաբերում է նրա դերին, դա մի ինչ ավելի նուրբ հարց է: Ֆրանսահայ համայնքը բազմաշերտ է մասնագիտական հարաբերությունների առումով: Հենց այդ տեսակետից էլ պետք է երկակի մոտեցում ունենալ նրա դերին: Առաջինը՝ մասնաճյուղային կամ մասնագիտական հարաբերությունների տեսանկյունից է: Օրինակ, որևէ բժիշկ Ֆրանսիայից գալիս է Հայաստան, այնուհետև պատասխան հրավերով հայաստանցի բժիշկն է գնում Ֆրանսիա, և այդպես իրականացվում է փոխանակումների խիստ կարևոր դերը: Երկրորդը, որն ավելի հեսարհրական է, հայ համայնքի աշխարհագրական դերն է: Ասենք, Ֆրանսիայում: Տարբեր քաղաքներում Մարսել, Վալանս և այլն, հայերն ունեն նաև քաղաքական կշիռ: Այսինքն, ընտրողներ են և կարևոր ազդեցություն ունեն ընտրությունների արդյունքների վրա: Այդ ազդեցությունը, փաստ Ասծո, դրական է և այդ առումով նրանք կարող են իրենց քաղաքական վարքը բերել Հայաստան:

Չպետք է մոռանանք քաղաքների եղբայրացումը և այդ կարգի վերադարձ այցելությունները, որ աստիճանաբար սկսում են հաճախանալ: Քաղաքակիրթ հարաբերությունների փոխանակման այս կառույցը խոստանալիս հետաքրքիր է դարձնում: Կարող եմ ավելացնել, որ հայ համայնքի ներկայացուցիչներն իրենց ընտրած դպրոցամատների միջոցով որոշակիորեն իրենց ձայնը կարող են հասցնել նաև պետությանը: Այսինքն, համայնքը ոչ միայն տեղային մակարդակով, այլև ազգային մակարդակով պետությանից կտրված չէ: Չի կարելի ասել, թե դա բացարձակ արդյունք է, բայց համենայն դեպս այդ հնարավորությունը կա:

– Ինչպիսի՞ դաշնակից է Ֆրանսիան Հայաստանի համար:

– Ինձ այնքան էլ դուր չի գալիս «դաշնակից» բառը, որովհետև այն ինձ դատարան է հիշեցնում: Ֆրանսիայի և Հայաստանի միջև հարաբերությունները շատ հեսարհրիր են և շատ բազմաբնույթ: Դրանք ուղղակի, երաժշտական տերմինով ասած, ռեզոնանսային են, հարմոնիկ: Այսինքն, միայն առաջին վերաբերող բառերով կարելի է խոսել այդ հարաբերությունների մասին: Սակայն շատ բանկարժեք հարաբերություններ են, և չսահմանված խնամքով պետք է վերաբերվել ու զարգացնել դրանք բոլոր բնագավառներում:

– Պարզ է, որ որոշ դեպքում, Դուք չեք ցանկանա գնահատական տալ Հայաստանի ներքաղաքական զարգացումներին, բայց այնուամենայնիվ, պետք է հեսեսեք առաջիկա խորհրդարանական ընտրություններին:

– Մի բան պետք է անմիջապես ասեմ, հեշտ չէ կազմակերպել ընտրություններ մի երկրում, որը գտնվում է սառույցի վիճակում: Սառույցի համեմատած նախկին Խորհրդային Միության մյուս երկրների հետ: Երկու հարց կա, որ Հայաստանին դժվարին կացության մեջ են դնում. էներգետիկ ճգնաժամը և Ղարաբաղի խոչընդոտը: Դարձ ասած հնարավոր չէ այս պայմաններում գտնվող երկրին ասիրել, որ ընտրություններ կազմակերպի այնպես, ինչպես օրինակ Շվեյցարիան: Այնուամենայնիվ, ես խորապես հավատում եմ Հայաստանին և կարծում եմ, որ իրավացի եմ: Բնական է, դժվար է աղաղակել կատարյալ և իդեալական ընտրություններ: Բայց կարելի է հասկացնել ժողովրդին, որ ընտրություններից է կախված լինելու իր մոտալուտ ապագան: Այսինքն, ժողովուրդն ընտրում է նրանց, որոնցից անմիջապես կախված է իր ճակատագիրը: Թե ո՞ւմ կընտրեն նրանք, դա արդեն այլ հարց է: Ամենուրեք, ովքեր իշխանություն ունեն, չեն ուզում այն բաղնել, ովքեր չունեն, ուզում են իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Պարզապես, երբ ժողովրդի մեջ ընտրությունների ճիշտ գնահատման դպիր լինի, Հայաստանը կունենա լավ օրենքներ, հավասարակշռված իշխանություն և ընդդիմություն: Այնժամ կգան նոր մարդիկ, որոնք կստեղծեն ճիշտ օրենքներ և հնարավոր կլինի աղաղակել իրապես գործող կառույցներ:

– Մեր վերջին հարցը կապված է Ձեր հրաժեշտի հետ: Ի՞նչ տվեց աշխատանքը մեր հանրապետությունում, ինչպիսի՞ զգացումներով եք բաժանվում Հայաստանից:

– Նախ, վստահ չեմ, Հայաստանից կգնամ, թե ոչ, հավանաբար դա կլինի 1995-ին, բայց ստույգ չեմ կարող ասել երբ: Ինչ վերաբերում է դեսպանատանը, այն խորհրդանշական իմաստ ունի. մենք ընդհանրապես, որ այն կառուցվի համատեղ Ֆրանսիական և հայկական ձեռնարկությունների միջոցով, թեև դա առանձնապես չնպաստեց շինարարությանը, բայց այն կարևոր իմաստ ունի: Ինչ վերաբերում է Հայաստանին, հեսարհրիրն այն է, որ ես որևէ տեղ երբեք դեսպանատուն չեմ ստեղծել: Դա նաև ինձ համար էլ փորձ էր: Ոչ միայն ինձ համար, երբ ես եկա, Հայաստանն էլ չէր ունեցել դեսպան: Այսինքն փոխադարձ դաստիարակության դաշտ կար, որը ես կարծում եմ, մենք դասով հաղթահարեցինք: Բացի այդ, պետք է ասեմ, որ եկել էի մի երկիր, որը բացարձակ չէի ճանաչում և որտեղ ոչ ոքի չէի ճանաչում: Մի երկիր, որը դասմակարդեն, իր հոգևոր արժեքների առումով և աշխարհագրական դիրքով բացարձակապես յուրահատուկ երկիր է: Ես եկել եմ այն համոզման, որ յուրահատուկ հայ ունի ինչ որ բան ինձ ասելու, ինչ որ բանով ինձ զարմացնելու: Մյուս կողմից, մինչ զբաղված էի դեսպանատան կառուցումով, Հայաստանը ևս կառուցվում էր զարմանալիորեն: Երբ համեմատվում էինք Ֆրանսիայի հետ, ազգը և պետությունն արդեն որոշակի ժամանակահատվածով հանդիպնում են իրար: Հայաստանում ազգի և պետության միջև այդ տարանջատումը չկար, որոշակի փոխներթում չկար: Եվ բնականաբար, անհրաժեշտ է նշել այն համոզմունքը, այն դրական լիցքը, որ ինձ հաղորդեց մարդկային հարաբերությունների վերահաստատումը Հայաստանում: Այսինքն, պետությունը մնում է պետություն, իսկ մարդկային արժեքները մնում են մարդկային արժեքներ: Եվ Հայաստանն այս առումով անանցելի է ինձ համար:

Զրուցազրույցավարեց
ՏԻԳՐԱՆ ԱԱՍՏԱՏՈՒՐԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊԱՏԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի նոր առաքելությունը

Ուժեղ Ֆրանսիա ուժեղ Եվրոպայում

Ֆրանսիան Եվրոպական միության նախաձեռնողը

Համաշխարհային պատմության վերջին երկուհարյուրամյա ընթացքը մեծագույն չափով պայմանավորեց Ֆրանսիայի պատմության ամենախոցվածությամբ ընթացքը, որն իր նշանակությամբ կանխորոշեց ոչ միայն Եվրոպայի, այլև համաշխարհային պատմության հետագա զարգացումը: Բաստիլի գրավումը խորհրդանշեց մայրցամաքի պատմական շրջադարձը, ինչպես նաև հասարակական մտածողության նոր հորիզոնները, քաղաքական փիլիսոփայության նոր ուղենիշները, մարդկային համակեցության նոր կանոնները, ստեղծելով իրավական և քաղաքական հիմնադրույթների մի ամբողջ համալիր, որից սնվեցին և շարունակում են սնվել իրար հաջորդող տարբերյալ քաղաքական, փիլիսոփայական, իրավական, կրոնական և այլ դպրոցները: Ֆրանսիական հեղափոխությունը իրավամբ կարելի է դասել պատմական այն իրադարձությունների շարքին, որոնց բաղած ժառանգությունը մշտապես լինելու է բազմաբնույթ, երբեմն իրարամերժ գիտական մեկնաբանությունների և որոնումների առարկա, նորասեղծ արժեքների անսպառ այն շտեմարանը, որտեղից ծնվեցին պետական կառավարման և հասարակական հարաբերությունների նոր սկզբունքներ, որոնք ներկայումս էլ վերահաստատում են իրենց արժեքն ու այժմեականությունը, հավատարտություն պատկանելով ինչպես Ֆրանսիային, այնպես էլ ամբողջ մարդկությանը: Ներկայում անդրադառնալով Ֆրանսիայի դերին համաշխարհային համակարգում, նոր պատմական փոփոխությունների լույսի ներքո, առարկայական անհրաժեշտություն է առաջացել նորովի գնահատել այս երկրի դերը, բնորոշել նրա ներքին և արտաքին քաղաքական կառուցվածքները, զարգացման հնարավոր ուղղությունները և դրանով իսկ փորձել պատկերացնել ներկա պատմական պահի քաղաքական նշանակությունը, քանի որ Ֆրանսիայի դերն ու կշիռը, ֆրանսիացի ժողովրդի ներուժի ուղղորդումը և այս երկրի ներքին զարգացումները անտարակույս վճռորոշ նշանակություն են ունենալու ներկա անցումային, միջազգային-քաղաքական իրավիճակի վրա:

բաս, դիվանագետ և փիլիսոփա Շառլ Լուի դե Սեկոնդատ դրեց «Եվրոպական հավասարակշռության հանրագրության գաղափարներ» ծրագիրը, որտեղ նա նախանշեց Եվրոպական համադաշնության մի շարք իրավական և քաղաքական ամբողջապես նոր կանոններ, Եվրոպական երկրների զարգացման նոր եզրեր, հասմանվորողական նոր մեխանիզմներ, սկզբնավորելով Եվրոպայի սերտաճման քաղաքական, իրավական և փիլիսոփայական բանավեճի մի նոր փուլ, ամփոփելով այս գաղափարի անցյալի փորձը և նոր հենք ծառայելով առաջիկայի մտածողների համար: Եվրոպական Լուսավորչության մեծ մտածող Ժան-Ժակ Ռուսո իր «Եվրոպացիների միության» գաղափարը բխեցնում էր Հենրիխ Չորրորդի, Սյուլիի և Սենի-Պիերի Եվրոպական միասնականության դրույթներից, զարգացնելով և լրացնելով դրանք մարդասիրական նոր փիլիսոփայությամբ: «Եվրոպականության» գաղափարները բնականաբար իրենց վրա էին կրում ժամանակի աշխարհայացքի և մշակույթային հարաբերությունների առանձնահատկությունների դրոշմը և հիմնականում խթանեց հիմում ունեցին կրոնադեսական կամ աշխարհիկ դեկավարների իշխանության հաստատման, բնդհանուր կրոնի հիստոնեության կամ էլ տվյալ պատմական իրավիճակում առաջադիմաբար երկրի գնահատության շուրջ համախմբման հիմնավորող գաղափարներ: Եվրոպական քաղաքական միտքը շարունակեց իր որոնումները Եվրոպայի միավորման ուղիներ փնտրելու համար, բայց պատմականորեն այն իրականացնելու փորձերը դարձան բազմաթիվ պատերազմների հանգեցնող և մի քանի հարյուրամյակ միջազգային-քաղաքական ասպարեզում գործածվող «Եվրոպական հավասարակշռության» հիմնադրույթի հիման վրա կատարված հարաբերությունները. Եվրոպայի ճարտարապետության «ռենիֆիկացիան». Առաջին աշխարհամարտը. Եվրոպային տիրանալու գերմանական նացիոնալ-սոցիալիզմի համաշխարհային ազդեցությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպական սերտաճման գաղափարը հատանցել էր և արդյունքն էր Եվրոպական ժողովուրդների պատմական փորձի հանգամանքը, հատարակական նոր գիտակցության ձևավորման և նշանավոր մի շարք քաղաքական գործիչների Եվրոպան ճգնաժամերի օղակից դուրս բերելու, մայրցամաքի զարգացման ուղղությունը փոխելու հեռահար քաղաքական համաձայնություններ: Եվրոպական ընկերակցության հիմքերը ստեղծող ժամանակի խոշոր քաղաքական դեմքերի Շառլ դը Գոլի, Կոնրադ Ադենաուերի, Ալսիդ դե Գասպերիի, Ռոբեր Շումանի, Ժան Մոնեի միջազգային աստղաբեզում հայտնվելը կարելի է մի կողմից բացատրել պատմական նախախնամությամբ, բայց և Եվրոպայի համար կիզակետային փուլում մայրցամաքի ընդհանուր Ֆրանսիայի կշիռը նոր աշխարհակարգում ունեցող համեմատական է Եվրոպայի հզորացմանը, կայունությանն ու անվտանգությանը: Գոլլիզմը քաղաքական գաղափարախոսության, հիմնադրույթների մի ամբողջ նոր տեսություն բացեց Ֆրանսիայի ետպատերազմյան իրականության համար, վերածվելով ոչ թե մի ինչ-որ քարացած ու ավարտուն գաղափարախոսության, այլ քաղաքական մտածողության մի նոր ձևի, որից խրենց սկիզբն առան և լիցքավորվեցին ֆրանսիական ամենատարբեր քաղաքական հոսանքներ: Սառը պատերազմյան շրջանից մինչև խորհրդային համակարգի փլուզումը Ֆրանսիային էր վերադարձնում նախկին դիրքերը: Ներկայիս կախված ԵՄ-ի միջազգային քաղաքական կարգավիճակը և նոր ձևավորվող ուժերի հավասարակշիռը ետսառըպատերազմյան աշխարհակարգում:

Ֆրանսիայի նախագահության նոր ակնկալիքներ կարելի է խմբավորել չորս հիմնական մասի: Նոր դասել տնտեսական աճին և աշխատատեղերի զոյացմանը, առաջ տանել Եվրոպայի անվտանգությունը, հաստատել Եվրոպայի մշակութային բազմազանությունը և նախապատրաստել 1996 թվականի Միջկառավարական համաժողովը:

Տնտեսական աճ և աշխատատեղեր: Այս քաղաքականությունն ունի մի քանի բաղկացուցիչներ: ԵՄ-ի ռազմածումը, որի առաջին քայլը եղավ այս տարվա մարտի 20-21-ին Փարիզում կայացած Եվրոպայում կայունության դպրոցի խորհրդաժողովը: 52 երկրների կողմից ստորագրված «Եվրոպայում կայունության դպրոց» փաստաթուղթը կազմված է Հռչակագրից և բարիդրացիության սկզբունքներ հաստատող, ազգային փոխադարձությունների իրավունքներ դաստիարակող, սահմանների անաղարտությունը և հակամարտությունների կանխարգելմանն ուղղված համաձայնագրերից: Այս նախաձեռնությունը, որի հեղինակն էր Ֆրանսիայի նախկին վարչապետ Էդուար Բալադյուրը, նոր ասպարեզ ունի լուծել այն խնդիրները, որոնք Արևելակենտրոնական Եվրոպայի երկրներ ժառանգել են անցյալից, ստեղծելով մայրցամաքի համար անվտանգության իրական և բաբախիներ: Ստորագրված փաստաթղթերի վերահսկումն ու իրականացումը դեմ է կատարի ԵԱՀԿ-ն իր տրամադրության տակ եղած կոնֆլիկտների խաղաղ կարգավորման մեխանիզմների հաշվին:

Շարունակելով 60-ական թվականների ռազմամարտական ինքնուրույնության գոլիստական գիծը, Ֆրանսիան իր նախագահության ընթացքում նախատեսում է միջոցառումներ, որոնք կուժեղացնեն Եվրոպական ինքնուրույն ռազմական համակարգը հանձին Արևմտաեվրոպական միության (ԱԵՄ) հետագա կազմակերպման, այս կազմակերպության գործառույթների որոշակիացման, ՆԱՏՕ-ի հետ դասախոսության սահմանների և տիմման եզրերի ճշգրտման, ԱԵՄ-ի ռազմատեխնիկական հագեցման և դեկավարման մեխանիզմների մշակման ու կիրառման համար: Հարավսլավական ճգնաժամը բացահայտեց Եվրոպական ռազմական համագործակցության թույլ կողմերը, իսկ հակամարտության ընդլայնման վտանգը հրամայական է դարձնում ԵՄ-ի արդյունավետ դաշտանության հարցը: Ֆրանսիան ցանկանում է, որ ԵՄ-ն ունենա ՆԱՏՕ-ից անկախ իրական ռազմական մեքենա, որը դեմ է մնի ԱԵՄ-ը, սակայն այս հարցը կարող է լուծվել միայն ժամանակի ընթացքում, քանի որ ԱԵՄ-ը տեխնիկական և օդերևութային իմաստներով ի զորու չէ դեռևս լուծել համաեվրոպական ընդգրկման խնդիրները և ՆԱՏՕ-ն է արևմտաեվրոպական անվտանգությունը երաշխավորող միակ կառույցը: Ֆրանսիան ձգտում է ուժեղացնել ԱԵՄ-ի առաջապահ գնդային ուժերի կորիզը հանդիսացող Եվրակորպուսը, դաստիարակում է մի շարք ռազմական ծրագիր, մասնավորապես Միջերկրական բազմազգ ուժերի, Ֆրանս-բրիտանական միացյալ օդային զորախմբի, Սոլոգնիությունների եվրոպական գործակալության և այլ նախաձեռնություններ, որոնցից շատերի հեղինակը Փարիզն է: Այս ծրագրերի հաջող իրականացումը մեծապես կդյուրանավորի եվրոպական մայրցամաքի ռազմամարտական հավասարակշռության հեռանկարը, իրական հիմք

կան իրականացմանը հասան Ֆրանսիայի քաղաքական կյանքի նշանավոր դեմքերի Ժիսկար դԷստենի, Ժակ Դելորի, Տոմաս Միտերանի և այլոց ջանքերությամբ սկսած 1962 թվականի Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության ընդունումից մինչև 1992 թվականի Մաաստրիխտի պայմանագրով նախատեսված Քաղաքական, տնտեսական և դրամական միությունը:

Ներկայում Եվրոպական միությունը գտնվում է շրջադարձային փուլում: Բեռլինի պատի փլուզումից հետո առաջացել են նոր իրողություններ և աշխարհաքաղաքական ուժերի նոր փոխհարաբերակցություն: Անկա են անկայունության լայն գոտիներ, որոնք իրենց ազդեցությունն ունեն Եվրամիության ներսում ու Ֆրանսիա-ԵՄ հարաբերությունների վրա և զգալի չափով եվրոպական սերտաճման հեռանկարները կասկածի են ֆրանսիական քաղաքականությանը: 1995 թվականը վճռորոշ է նրա այն իմաստով, որ Եվրամիությունում հունվարից նախագահում է Ֆրանսիան, որն ուղենշել է եվրոպական ճարտարապետության մի քանի գերակայություններ: Այս ծրագրերի իրականացումից կամ ձախողումից են նշանակալիորեն կախված ԵՄ-ի միջազգային քաղաքական կարգավիճակը և նոր ձևավորվող ուժերի հավասարակշիռը ետսառըպատերազմյան աշխարհակարգում:

Ֆրանսիայի նախագահության նոր ակնկալիքներ կարելի է խմբավորել չորս հիմնական մասի: Նոր դասել տնտեսական աճին և աշխատատեղերի զոյացմանը, առաջ տանել Եվրոպայի անվտանգությունը, հաստատել Եվրոպայի մշակութային բազմազանությունը և նախապատրաստել 1996 թվականի Միջկառավարական համաժողովը:

Տնտեսական աճ և աշխատատեղեր: Այս քաղաքականությունն ունի մի քանի բաղկացուցիչներ: ԵՄ-ի ռազմածումը, որի առաջին քայլը եղավ այս տարվա մարտի 20-21-ին Փարիզում կայացած Եվրոպայում կայունության դպրոցի խորհրդաժողովը: 52 երկրների կողմից ստորագրված «Եվրոպայում կայունության դպրոց» փաստաթուղթը կազմված է Հռչակագրից և բարիդրացիության սկզբունքներ հաստատող, ազգային փոխադարձությունների իրավունքներ դաստիարակող, սահմանների անաղարտությունը և հակամարտությունների կանխարգելմանն ուղղված համաձայնագրերից: Այս նախաձեռնությունը, որի հեղինակն էր Ֆրանսիայի նախկին վարչապետ Էդուար Բալադյուրը, նոր ասպարեզ ունի լուծել այն խնդիրները, որոնք Արևելակենտրոնական Եվրոպայի երկրներ ժառանգել են անցյալից, ստեղծելով մայրցամաքի համար անվտանգության իրական և բաբախիներ: Ստորագրված փաստաթղթերի վերահսկումն ու իրականացումը դեմ է կատարի ԵԱՀԿ-ն իր տրամադրության տակ եղած կոնֆլիկտների խաղաղ կարգավորման մեխանիզմների հաշվին:

Շարունակելով 60-ական թվականների ռազմամարտական ինքնուրույնության գոլիստական գիծը, Ֆրանսիան իր նախագահության ընթացքում նախատեսում է միջոցառումներ, որոնք կուժեղացնեն Եվրոպական ինքնուրույն ռազմական համակարգը հանձին Արևմտաեվրոպական միության (ԱԵՄ) հետագա կազմակերպման, այս կազմակերպության գործառույթների որոշակիացման, ՆԱՏՕ-ի հետ դասախոսության սահմանների և տիմման եզրերի ճշգրտման, ԱԵՄ-ի ռազմատեխնիկական հագեցման և դեկավարման մեխանիզմների մշակման ու կիրառման համար: Հարավսլավական ճգնաժամը բացահայտեց Եվրոպական ռազմական համագործակցության թույլ կողմերը, իսկ հակամարտության ընդլայնման վտանգը հրամայական է դարձնում ԵՄ-ի արդյունավետ դաշտանության հարցը: Ֆրանսիան ցանկանում է, որ ԵՄ-ն ունենա ՆԱՏՕ-ից անկախ իրական ռազմական մեքենա, որը դեմ է մնի ԱԵՄ-ը, սակայն այս հարցը կարող է լուծվել միայն ժամանակի ընթացքում, քանի որ ԱԵՄ-ը տեխնիկական և օդերևութային իմաստներով ի զորու չէ դեռևս լուծել համաեվրոպական ընդգրկման խնդիրները և ՆԱՏՕ-ն է արևմտաեվրոպական անվտանգությունը երաշխավորող միակ կառույցը: Ֆրանսիան ձգտում է ուժեղացնել ԱԵՄ-ի առաջապահ գնդային ուժերի կորիզը հանդիսացող Եվրակորպուսը, դաստիարակում է մի շարք ռազմական ծրագիր, մասնավորապես Միջերկրական բազմազգ ուժերի, Ֆրանս-բրիտանական միացյալ օդային զորախմբի, Սոլոգնիությունների եվրոպական գործակալության և այլ նախաձեռնություններ, որոնցից շատերի հեղինակը Փարիզն է: Այս ծրագրերի հաջող իրականացումը մեծապես կդյուրանավորի եվրոպական մայրցամաքի ռազմամարտական հավասարակշռության հեռանկարը, իրական հիմք

digitised by A.R.A.R.@

ադահովելով եւ հաստատելով Եվրամիության անկախ դաշնային քաղաքականությունը:

ԵՄ-ի անվտանգության խնդիրը անմիջականորեն կապվում է ԵՄ-ի ընդլայնման հարցի հետ: Այստեղ առկա են մի շարք տարաձայնություններ Ֆրանսիայի եւ Գերմանիայի միջեւ: Մասնավորապես վերջինիս դաշնային տեսակետը արտացոլող Քրիստոնյա-ժողովրդավարական միության «Խորհրդածություններ եվրոդրական քաղաքականության մասին» ծրագրային փաստաթղթում նշվում են ԵՄ-ի ընդլայնման երկրներ (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Սլովենիա) եւ ժամկետը՝ 2000 թվական: Ֆրանսիան դաշնային է ասիճանական ընդլայնման մոտեցումը, առանց կոնկրետ ժամկետներ նշելու այն երկրների, որոնք կհամապատասխանեն անդամության սոցիալ-տնտեսական եւ քաղաքական փոփոխությունների անցկացման կոնկրետ չափանիշների, կարող են մաս կազմել ԵՄ-ին: Որոշակի չափով Ֆրանսիան Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի երկրների անդամակցումը ԵՄ-ին կապում է ԱԵՄ-ին նրանց անդամակցման հետ:

Ֆրանսիան նախատեսում է զարգացնել ԵՄ-ի արտաքին քաղաքական մի շարք ուղղություններ՝ նորացնել ԵՄ-ի միջերկրային քաղաքականությունը, ուժեղացնել Աֆրիկայի, Խաղաղօվկիանոսյան, Կարիբյան ավազանի երկրների հետ քաղաքականությունը, զարգացնել կապերը Լատինական Ամերիկայի եւ Ասիայի երկրների հետ:

Ֆրանսիան ծրագրում է զարգացման հիմքեր ստեղծել Եվրամիության համաշխարհային դերի համար, աղահովելով ուժեղ աշխարհաքաղաքական լծակներ: Եհտորդային շրջանից հետո սկսված ուժի վերաբաշխումն եւ ազդեցության նոր գոտիների առաջացման միջազգային քաղաքական նոր իրավիճակում Եվրամիության կայացման հարցերը նրա ամոր դիրքերն են տարբեր աշխարհամասերում: 1995 թվականին ԵՄ-ին Շվեդիայի, Ֆինլանդիայի եւ Ավստրիայի անդամակցմամբ, Եսսենի գագաթաժողովից հետո Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրների անդամակցման տեսանելի հեռանկարի առաջացմամբ ԵՄ-ի ծանրության կենտրոնը միանշանակորեն տեղափոխվել է դեպի հյուսիս, նպաստելով գերմանական ազդեցության աճին: Իսկ Միջերկրականի ավազանի անկայունությունը, հատկապես Ալժիրում եւ Ֆրանսիայում Մարոկոսում եւ Բուրունդիում ողբերգական իրադարձությունները զգալիորեն վտանգել են Ֆրանսիական ավանդական դիրքերը եւ ԵՄ-ի հարավային բեռը: Աշխարհաքաղաքական այս դաստիարակությունը թելադրել է ԵՄ-ի առանցքը կազմող Ֆրանս-գերմանական համագործակցությունը եւ ԵՄ-ում ստեղծել նորին հյուսիս հարավ անհամաչափության ի վնաս ԵՄ-ի «լատինական» երկրների: Ֆրանսիայի միջերկրական, հատկապես մաղրիբյան եւ աֆրիկյան քաղաքականության խթանումը համաեվրոպական շրջանակներում բերադրված է ԵՄ-ի հավասարակշռված զարգացման մտահոգությամբ եւ Ֆրանսիայի դերի նվազեցման մտավախությամբ: Ֆրանսիայի կողմից դաշնայնվող ԵՄ-ի միջերկրական քաղաքականությունը հաշվի է առնում նաեւ կապերի ամրապնդումը Թուրքիայի հետ եւ ԵՄ-ի դերի վերահաստատումը Մեծավոր Արեւելքի խաղաղ կարգավորման գործընթացում:

Ֆրանսիան մեծ նշանակություն է տալիս Լատինական Ամերիկայի երկրների հետ կապերի ամրապնդմանը եւ վարում է ԵՄ-ի տնտեսական եւ քաղաքական հենարան ապահովել այս մայրցամաքում: Ի հակակշիռ 1994 թվականին մինչեւ 2005 թվականը համատեղելիության տարածքի ստեղծման ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Մայամիում կնքած դաշնագրի, վերակազմելով եվրոդական երկրների դաշնային-ազգային ազդեցությունը Հարավային Ամերիկայում:

Ֆրանսիական նախագահությունը նախատեսում է նաեւ ԵՄ-ի ներքին անվտանգության աղահովումը: Շենգենի համաձայագրերի ուժի մեջ մտնելուց հետո Ֆրանսիան կարեւորում է համաեվրոդական «Եվրոդոդ» ոստիկանական գործակալության ստեղծումը, որը դեմ է դաշնային կազմակերպված հանցագործության, թմրանյութերի տարածման եւ աղտոտման նեղազդի դեմ:

Եվրոդայի մշակութային բազմազանություն: Այս ուղղությամբ Ֆրանսիան մտադիր է իրականացնել մի շարք ծրագրեր, որոնք կնդաստեն միաժամանակ եւ ազգային ինքնատիպության ու մշակութային առանձնահատկությունների դաստիարակմանը, եւ եվրոդական ինքնության ձեւավորմանը: Նախատեսվում է հնարավորության բացավառում « Հեռուստատեսության առանց սահմանների» եւ «Մեդիա» ծրագրերի իրականացումը եւ բազմալեզվության ու հաղորդակցման ընդհանուր համաեվրոդական դաշտի կազմակերպումը: Այս ծրագրերն այլ խնդիրների շարքում ուղղված են նաեւ հակակշռելու ամերիկյան կինեմատոգրաֆիական առաջադիմությունը եւ եվրոդական շուկան՝ առաղահովելու սեփական արտադրանքը:

Միջկառավարական համաժողով: Մաաստրիխտի դաշնագիրը նախատեսում է 1996 թվականին անցկացնել ԵՄ անդամ երկրների մի համաժողով, որտեղ կհաստատվի եվրոդական այս կազմակերպության աղագա կառուցվածքը, կճշտվեն քաղաքական եւ դրամաֆինանսական համագործակցության ոլորտները եւ կմշակվեն դրանց իրականացման ինստիտուտները եւ գործարկման ձեւերը:

Ներկա փուլում Ֆրանսիայի եւ Գերմանիայի միջեւ առկա են որոշ տարակարծություններ Եվրամիության կառավարման, բնույթի եւ նրա հաստատությունների դերի վերաբերյալ: Գերմանիան առաջարկում է ԵՄ-ն ձեւավորել դաշնային սկզբունքների հիման վրա, բարձրացնելով ընտրվի մարմինների Եվրախորհրդարանի եւ Եվրոդական հանձնաժողովի դերը եւ դարձնելով դրանք որոշում կայացնող մարմիններ: Ֆրանսիան դաշտանում է այլ տեսակետ՝ որոշումներ դեմ է կայացնեն միջկառավարական մարմիններ՝ Եվրոդական խորհուրդը եւ Նախարարների խորհուրդը: Ֆրանսիական մոտեցումը բացատրվում է ԵՄ-ի ընդլայնման դեպքում ընտրվի մարմիններում իր դերի նվազեցման զգուշավորությամբ, այն դեպքում երբ միջկառավարական հաստատությունների ուժեղացման դեպքում Ֆրանսիան կդառնա դեսի իր որոշիչ դերը:

Ֆրանսիական նախագահության ընթացքում նախատեսվում է դաստատել այդ հանձաժողովի զեկույցը եւ տեխնիկական հարցերը:

Անշարահույս Եվրամիությունը հասել է իր ամենաբարդաստվարագույն բաղադրիչին, որը նրան դեմ է տալիս դեպի հաջող դարը: Եվրոդական ժողովուրդների սնանկական ճակատագիր կերտելու որոշական այս սենսացիոնալիզմի հաջողությունը մեծաղես կախված է նաեւ Ֆրանսիական քաղաքականությունից, որի առավել խնդրված եւ ի մասսայի բնորոշումներից մեկը դաստիարակում է իր նախկին նախագահ Ֆրանսուա Միտերանին. «Ու մեկ Ֆրանսիա ուժեղ Եվրոդայում»:

ՆԵՐՍԵՍ ՄԱՐՏՈՅԱՆ,
Ազգամիջյան եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ԱԶԳ

Եվրոպայի դաշտից

Ժակ Շիրակը՝ Ֆրանսիայի Հանրապետության նոր նախագահ

Փարիզի քաղաքապետ Ժակ Շիրակը մայիսի 7-ին ընտրվեց Ֆրանսիայի Հանրապետության նախագահ, անակնկալներով եւ վայրիվերումներով լի ընտրարշավից հետո վերջ դնելով Ֆրանսուա Միտերանի մարմնավորած սոցիալիստների նախագահության 14 տարիներին:

Ամիսներ շարունակ տեւած դաշտակցումից հետո նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ներկայանալով որոշես միացյալ աջ մեծամասնության բեկնածու, 62-ամյա Շիրակը, որը դարձավ 1958 թ. գեներալ Շառլ դը Գոլի հիմնած 5-րդ հանրապետության 5-րդ նախագահը եւ երկրի 22-րդ նախագահը, քվեների 52,64 տոկոսն ստացավ իր ախոյան սոցիալիստ Լիոնել Ժոսպենի 47,36 տոկոսի դիմաց:

Փարիզի քաղաքապետի համար, որը երրորդ փորձից ընտրվեց 1981 եւ 1988 թթ. երկու անհաջողություններից հետո, սա 30-ամյա քաղաքական կարիերայի բարձրակետն է եւ մեծ համառության ու հաղթանակի անկոտրում կամքի արդյունքը դժվարին տարիներից հետո, որոնք հաճախ աչքի էին ընկնում սեփական ճամբարում նրա մեծ միայնությամբ:

Տարօրինակ կերպով ֆրանսիացի ձախերի անհաջողությունը կարող է նորացման սկիզբ դառնալ, խանդավառ եւ արդյունավետ ընտրարշավից հետո Լիոնել Ժոսպենի արձանագրած ավելի քան դաստիարակ ցուցանիշը ներկայացնում է սոցիալիստական կուսակցության մի տղավորիչ վերելք 1993 թ. օրենսդրական ընտրություններում կրած դարտությունից ի վեր: Վերջին ցուցանիշը 1994 թ. հունիսի եվրոդական ընտրություններում ստացած 14,5 տոկոսը, ամենացածրն է կուսակցության դաստության մեջ:

Կողմնակիցների ցնծությամբ ընդունված Շիրակի հաղթանակը կնշանավորի մի գոլիստի վերադարձ՝ Եղիսեյան դաշտ, գեներալ դը Գոլի անմիջական ժառանգորդ Ժորժ Պոմպիդոուի մահից 21 տարի անց, որի դաշտանավարման տարիներին Ժակ Շիրակն իր քաղաքական առաջին քայլերն էր արել:

Մայիսի 7-ի երեկոյան արած իր առաջին հայտարարությամբ նախագահ հավատաց «բոլոր Ֆրանսիացիների նախագահը» լինելու իր կամքը եւ իր «գլխավոր ճակատամարտը» համարեց դաշտարի գործազրկության ֆրանսիական հասարակությունը խայթող այդ չարիքի եւ մերժվածության վերջին տարիների մյուս դրամատիկ երեւույթի դեմ:

Պարոն Շիրակն իր ամբողջ ընտրարշավը հիմնել էր աշխատատեղերի ստեղծման բացարձակ առաջնայնության վրա, որոնցի հնարավոր լինի խուսափել վտանգավոր «սոցիալական դաշտակտումից», ինչպես նաեւ սոցիալիստների իշխանության 14 տարիներից հետո «փոփոխության» անհրաժեշտության վրա: Նիշ է, այդ իշխանությունը մեղմացվել էր սոցիալիստ նախագահի եւ աջերի կառավարության «համակեցության» երկու դաշտաքարի դերում: Մնում էր միայն դարզել, թե ով կլինի երկրորդ փուլի երկու մասնակիցներից մեկը: Քվեատուներին արագորեն կորցնող Էդուար Բալադյո՞ը, թե՞ աստիճանաբար զորեղացող Լիոնել Ժոսպենը:

Եղավ մի նոր անակնկալ, որը չէր կանխատեսել հետազոտական բազմաթիվ հաստատություններից ոչ մեկը: առաջին փուլում սոցիալիստ թեկնածուն հաղթեց քվեների 23,3 տոկոսով, մինչդեռ Ժակ Շիրակը երկրորդ տեղում էր 20,84 տոկոսով, իր հետեւում թողնելով Էդուար Բալադյուրին (18,58 տոկոս): Միաժամանակ արձանագրվեց ծայրահեղ աջերի առաջընթաց Ժան Մարի լը Պենի Ազգային ճակատի ստացած քվեների 15 տոկոսի եւ այն բանի հետեւանքով, որ «բողոքավորների» քվեները ցրվեցին կոմկուսի (8,64 տոկոս), ծայրահեղ ձախերի (5,3), ազգայնական աջերի (4,74), «կանաչների» (3,32) եւ մեկ ուրիշ թեկնածուի միջեւ:

Այս անգամ բոլոր աջերը, նախագահական նախորդ ընտրությունների սխալը չկրկնելու մտահոգությամբ, որտեղ դարտությունն էին կրել երկդատակչության հետեւանքով, համախմբվեցին Ժակ Շիրակի շուրջը, որը, ի վերջո, նդաստակին հասավ մայիսի 7-ին:

Շիրակի հաջողությունը կողմնակիցներ այդ գիշեր խանդավառությամբ հավաքվեցին Կոնկորդ հրապարակում: [illegible] տարանցում կամ Շամ[illegible] վի փարիզյան շարքի [illegible]ինչ հիշեցնելով 1981 թ. [illegible] Միտերանի հաղթանակին հաջորդած ամբոխ ընտրողների գործողությունները:

Բոլոր մեկնաբանները նշեցին Ժակ Շիրակի եւ Լիոնել Ժոսպենի ընտրարշավի երկրորդ փուլին բնորոշ անտարբերությունը (Ժոսպենը շնորհավորեց հաղթողին եւ նրան հաջողություն մաղթեց), մինչդեռ առաջին փուլում զգալիորեն նվազ բարյացակամ արտահայտություններ էին վոլանակվել, մասնավորապես աջերի ճամբարում:

Նոր նախագահն այժմ ստիպված կլինի տեսականորեն միավորել սեփական կուսակցության (Հանրապետության աջակցող միավորում) բեկորները, որը դատակտվել էր Շիրակ-Բալադյուր լուրջ հակամարտությունից, որի հետեւանքով փորձ էր խախտվել էր աջերի ու ձախերի ավանդական հարաբերակցությունը: Նա դեմ է նաեւ դիմակայի վերաշխատաժացած սոցիալիստների ընդդիմությանը: Բայց Շիրակը հաստատեց ստիպված կլինի զբաղվել հասարակական ճգնաժամի կանխման դժվարին գործով եւ իրականացնել իր խոստացած «փոփոխությունը»:

Միջազգային ասպարեզում նա մասնավորապես դեմ է զբաղվի եվրոդական նուրբ գործերով, մինչդեռ նախատեսվում է եվրոդական հաստատությունների վերակառուցումը նվիրված 1996 թ. միջկառավարական խորհրդաժողովը: Նա արդեն հայտարարել է, որ ինքը դրա եզրակացություններ դնելու է հանրաքվեի: Շիրակը նաեւ հավատել է, որ ինքը կողմնակից է ֆրանս-գերմանական համագործակցության շարունակմանն ու ամրապնդմանը, որը Եվրոդայի կառուցման շարժիչ ուժն է:

ԳԵՂԱՄ ԳԱՌԵՆՍՏ
Տոստակ «Ազգի» համար

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

դիվանագիտական

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահան Փափազյան. «Անհար է չսիրել Փարիզը»

– Դրե. Փափազյան, դուք եղել եք Հայաստանի առաջին հավատարմատար Ֆրանսիայում եւ կանգնած եք հայ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների ակունքներում: Ինչպե՞ս սկսեց ամեն ինչ, եւ ինչպիսի՞ն է վիճակն այսօր:

– Իսկապես, իմ դիվանագիտական գործունեությունը սկսվել է Փարիզից, երբ ես նշանակվեցի Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Ֆրանսիայում: Փաստորեն ինձ բախտ վիճակվեց հիմք դնել հայ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների Փարիզում (մինչ այդ Ֆրանսիան աղեղն Հայաստանում ուներ իր դեսպանը): Բնականաբար, մենք մեր հնարավորություններով չենք կարող համեմատվել Ֆրանսիայի հետ: Ֆրանսիան անհամեմատ ավելի ակտիվ էր եւ գործունյա, եւ անձամբ ինձ համար շատ դժվարագույն է Ֆրանսիայի նման ակտիվությունը Հայաստանի հանդեպ: Խնդիրը ոչ միայն զգացմունքային, մշակութային եւ հոգեւոր մերձությունն է, այլեւ այն, որ Ֆրանսիան, որպես եզակի երկիր եւ ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ, ազդակի շահագրգռվածություն է ցուցաբերում Հայաստանի հետ իր հարաբերություններում, եւ մենք, որպես նորանկախ պետություն, դարաշրջանի դարասկզբի ենք համարձակ մոտեցում ցուցաբերել: Բայց իմ, մեր արտաքին քաղաքականության կարեւորագույն ուղղություններից մեկը Ֆրանսիայի վերաբերմունքը դարաբաղյան հակամարտության անհրաժեշտ է դիտարկել տարածաշրջանում հայ-ֆրանսիական երկկողմ հարաբերությունների շրջանակում: Ֆրանսիան որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, որպես եվրամիության անդամ եւ որպես ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ: Մեկ, Ֆրանսիայի վարած հավասարակշիռ քաղաքականությունը արտաքին քաղաքականության առումով էր: Անվտանգության ավագանին առաջացել է: Իհարկե, կան նաեւ բնույթներ, որոնք անհրաժեշտ է ասել: Սակայն շատ կարեւոր է, որ առաջիկայում մենք Փարիզի կենտրոնում դաշտանպատակ կազմակերպենք ՀՀ դեսպանատան 4 հարկանի շենքը, ինչը հետագա աշխատանքների բարելավման մեծ հնարավորություններ կստեղծի: Այսպես ասած, տեխնիկական կողմի մասին: Ինչ վերաբերում է հայ-ֆրանսիական քաղաքական հարաբերություններին, դարձյալ զարգանում են շատ դինամիկ: Իհարկե, կա անբավարարություն եւ ֆրանսիական, եւ մեր կողմից, սակայն դրա դրական միայն այն է, որ ունենք մեծ ծրագիր, որը չենք հասցնում իրագործել: Մի խոսքով, հայ-ֆրանսիական քաղաքական հարաբերությունները զարգանում են շատ արագ, եւ դրան մեծ չափով նոյասում է Լեւոնյանը եկավ Փարիզ, նա արդեն ուներ դեսպանատան գրասենյակ. ՀՀ առեւտրական ներկայացուցչության հարկաբաժին, ինչպես նաեւ հիմնադրում դեսպանատան համար եւ որպես կայուն Ֆրանսիայի արտգործնախարարությունում եւ պետական այլ կառույցներում:

– Ինչպիսի՞ն է վիճակը ներկայումս:

– Ես կարծում եմ, որ դեսպանատունն իր գործունեության մեջ բառոն Տեր-Պետրոսյանի եւ Հայաստանի արտաքին քաղաքականությունն իրականացնող այլ դեմքերի իմիջը, ինչպես նաեւ նրանց սերտ հարաբերություններ իրենց կոլեգաների հետ: Կուզենայի հիշել նաեւ, որ երբ «Ղարաբաղ» կոմիտեն բանում էր, Ֆրանսիան միակ երկիրն էր, որը համակողմանի աջակցություն ցուցաբերեց նրանց ազատման գործում:

Անձամբ ես շատ լավ հարաբերությունների մեջ եմ եղել Ֆրանսիայի գործակցությունն, անշուշտ, շատ մեծ նոյաստ կարող է բերել մեզ: Եվ ֆրանսիական կողմը տրամադրված է մեզ օժանդակել: Բայց ես այնքան տրամաբանություն ունեմ, թե միշտ չէ, որ Հայաստանի արտգործնախարարության գործունեությունը համապատասխան ձեւով շարունակվում է մեր մյուս գերատեսչությունների կողմից: Սա ես ասում եմ ոչ որպես բողոք, այլ որպես արձանագրում եմ փաստը, որն, ի դեպ, օբյեկտիվ է: Պարզապես, իմ կարծիքով, արտգործնախարարությունը մի փոքր առաջ է անցել մեր պետական այլ համակարգերից: Եվ սա բնական է, քանի որ մենք ենք, որ անընդհատ շփման մեջ ենք օտարների հետ եւ լավ ենք հասկանում, թե ինչպես պետք է հարաբերվել նրանց հետ եւ հարցերն առաջ տանել: Ես համոզված եմ, որ սա լուծելի խնդիր է:

Ինչ վերաբերում է մշակութային կապերին, սոսա Ֆրանսիական մշակույթի մեծությունը հանրահայտ է, եւ երբ մենք որպես ազգ մշակութային առումով ուզում ենք զարգանալ (իսկ մենք դա ուզում ենք), պետք է շատ խոր եւ լայն հարաբերություններ ոլորտանենք Ֆրանսիայի հետ: Բարեբախտաբար, Ֆրանսիայի հետ մենք ուղիղ օդային կապ ունենք, եւ դա մեզ մեծ հնարավորություններ է ընձեռում: Չմոռանանք, իհարկե, նաեւ խոշոր հայ համայնքի առկայությունը Ֆրանսիայում: Թեեւ այն դասակված է, բայց ունի այն առավելությունը, որ Ֆրանսահայ համայնքում մեծ թիվ են կազմում մասնագետները, որոնք որպես անհատներ շատ գնահատելի են: Եվ անհրաժեշտ է նրանց բոլորին այս կամ այն կերպ մերձեցնել Հայաստանի հետ: Ֆրանսահայ համայնքը Հայաստանի համար մեծ արժեք է, եւ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրա հետ մեր հարաբերություններին: Ընդ որում մեծ դրսեւորում ունեն ոչ միայն Փարիզն, այլեւ Մարսելը եւ Լիոնը հայ համայնքներ:

– Սիրո՞ւմ եք Փարիզը:

– Փարիզը չսիրել կարող է միայն նա, ով չի ընկալում աշխարհի գեղեցկությունը: Նորմալ մարդ Փարիզը չսիրել չի կարող: Հազիվ թե աշխարհում լինի մեկը, որը Փարիզի նկատմամբ բացասական էմոցիաներ ունենա: Ես առաջին անգամ Փարիզում եղել եմ 1988 թ., մասնավոր այցով (հարեւանայս ադրում է Փարիզում), եւ օդանավակայանում ոտք դնելուս դրեց ինձ զգացել եմ հարազատ գետնի վրա: Փարիզն այդպիսին է. երբ Փարիզ ես մտնում բաց սրտով, հաղորդ ինչ էլ դիմավորում է: Անհնար է չսիրել Փարիզը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



Ղարաբաղյան խնդրում Ֆրանսիայի դիրքորոշումը հավասարակշռված է

Հայաստանի արտաքին քաղաքական կարեւորագույն ուղղություններից մեկը, անկասկած, ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորումն է, հետեւաբար որեւէ երկրի հարաբերությունները Հայաստանի հետ զգալի չափով կախված են ղարաբաղյան խնդրի նկատմամբ այդ երկրի դիրքորոշումից: Ինչպիսի՞ն է Եվրոպական միության առավել ազդեցիկ երկրներից մեկի Ֆրանսիայի վերաբերմունքը ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում: Ըստ Հայաստանի փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանի, այդ առումով Ֆրանսիան միշտ էլ հանդես է եկել հավասարակշռված եւ սթափ դիրքորոշմամբ եւ առ այսօր կարողացել է [illegible] դաստեսական քաղաքականություն [illegible]: Ընդ որում Ֆրանսիայի վերաբերմունքը դարաբաղյան հակամարտությանը անհրաժեշտ է դիտարկել տարածաշրջանում հայ-ֆրանսիական երկկողմ հարաբերությունների [illegible]: Ֆրանսիան որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, որպես եվրամիության անդամ եւ որպես ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ: [illegible]: Ֆրանսիայի վարած հավասարակշիռ քաղաքականությունը արտաքին քաղաքականության առումով էր: Անվտանգության [illegible]

խորհրդի նախագահության վերջին հայաստանյան տեսքի ընդունումը, որի ընթացքում, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի եւ Գերմանիայի, Ֆրանսիան փորձեց դիտարկել ԵԱՀԿ-ի ոգին: Փոխարտգործնախարարի կարծիքով, Ֆրանսիան վերոհիշյալ երկրներից տարբերվում է նաեւ նրանով, որ դասական առումով իր բեռը չունի տարածաշրջանում եւ խնդիրներին նայում է առանց որեւէ նախապաշարման:

Հետաքրքրական է նաեւ, որ բեռ այլ խնդիրներում Ֆրանսիան որպես առաջնային սկզբունք ընդունում է պետությունների տարածքային ամբողջականությունը, այնուհանդերձ ղարաբաղյան խնդրում շատ արագ հասկացել է, որ Մինսկի խմբի շրջանակներում պետք չէ բարձրացնել տարածքային ամբողջականության հարցը, քանի որ Մինսկի խումբն ինքը նախատեսում է այդ հարցը քննարկել հետագայում, եւ պետք է խուսափել ցանկացած ձեւակերպումից, որը կարող է կանխորոշել այդ հարցը: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Ֆրանսիական մոտեցումն ունի նաեւ մերձդրդոգիական տարբերություններ: Այսպես, Ֆրանսիան միշտ կողմնակից է եղել, որ Մինսկի խմբի շրջանակներում կողմերը համաձայնության գան նախ եւ առաջ սկզբունքային հարցերի շուրջ, որից հետո միայն քննարկեն մանրամասները: Եվ ներկայումս Ֆրանսիա

չի այս մոտեցումն ընդունում են Մինսկի խմբի այլ անդամներ եւս:

Ղարաբաղյան խնդիրը միշտ էլ եղել է Ֆրանսիայի ուշադրության կենտրոնում: Դրա վկայությունն է նաեւ այն, որ Մոսկվայում տեղի ունեցած ելցին-Միտերան հանդիպումից հետո երկու նախագահները ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ հանդես եկան համատեղ հայտարարությամբ: Ներկայումս, երբ Ֆրանսիան եվրամիության նախագահողն է եւ ԵԱՀԿ առավել ազդեցիկ երկրներից մեկը, այդ հարցը շարունակում է մնալ Ֆրանսիայի ուշադրության շրջանակներում: Պրն Օսկանյանի խոսքերով, չի կարելի անտեսել նաեւ մեր հարաբերությունները Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան հետ եւ Ֆրանսիայի դեսպան տիկին Դարտինգի համագործակցությունը մեզ հետ, հարցի ճիշտ ըմբռնումը եւ մեր տեսակետների փոխանցումը, ինչպես նաեւ Փարիզում մեր դեսպանատան գործունեությունը: Մի խոսքով, Ֆրանսիան այն երկրներից է, որոնց հետ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման առումով որեւէ էական տարաձայնություն չկա: Եվ դա հույս է ներշնչում, թե Ֆրանսիայի խաղաղարար ջանքերի ակտիվացումը կարագացնի ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱԵՂՐԱՊԱՐԶ

Լորան Պիկ. Այսօր հարկավոր է լուծում գտնել վաղվա համար

Պրն. Լորան Պիկը, երիտասարդ ու հանդուգն այդ դիվանագետը Բե դ' Օրանում Արեւելյան Եվրոպայի փոխտնօրենության ավագանուհուական պատասխանատուն է, Կովկասի հարցերով մասնագետ: Նա այս տարվա հունվարի վերջերին ղեկավարում էր Ֆրանսիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղար պրն. Պերտրան Պոշիարդին, որ ճանապարհորդություն կատարեց Ադրբեջանի եւ Իրանում: Երեւանում նրանք մի շարք հանդիպումներ ունեցան հայ պատասխանատուների հետ: Բե դ' Օրանի իր ավագանենկում պրն. Պիկը ճշգրիտ է, հստակ եւ կարճ:

. Կովկասը որոշ իմաստով Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկն է, այդ իմաստով այն կոչված է ծառայելու որպես տարանցիկ գոտի այդ երկուսի միջեւ թե տնտեսական, թե քաղաքական առումով: Ուստի բնական է, որ մենք շահագրգռված ենք օգնելու, որպեսզի այնտեղ վերականգնվի կայունությունը, որ խախտվել է խորհրդային կայսրության փլուզումից հետո:

. Կովկասի կայունության հարցը ծայրահեղ բարդ է լուծելու համար: Նախ՝ որպիսեւ դասմությունն այնպես է դասավորել, որ խնդիրները կուտակվել են եւ խ. Միությունը, 70 տարի սառեցնելով դրանք, ոչ թե վերացրեց այդ խնդիրները, այլ ավելի սրեց: Ուստի անհրաժեշտություն է առաջանում սկսել մի գործընթաց, որ նկատի կառնի երկարաժամկետ լուծման հնարավորություն եւ արդյունքներ, ոչ թե կարճ ժամանակի համար, որի դեպքում հակամարտությունները կարող են վերսկսվել ցանկացած պահի: Հարկավոր է լուծում գտնել այսօր ապագայի համար:

. Կովկասյան հակամարտություններում ռազմական ուղին որեւէ արդյունք չտվեց, ուստի մնում է բանակցությունների, հակամարտությունների կարգավորման քաղաքական ուղին:

. Մենք տեսնում ենք, որ խաղաղ ընթացքի վատ կա Ադրբեջանում եւ Հայաստանում: Կարծում ենք, որ այդ երկրներն իրենց անկախությունը ամրապնդելու համար նախ եւ առաջ պետք է լծվեն տնտեսական զարգացմանը: Հայաստանը լծվել է տնտեսական բարեփոխումներին, որոնց դասրասակամությամբ օգնում է Ֆրանսիան: Ադրբեջանը նույնպես զարգանալու ցանկություն ունի: Նա համոզվել է, որ իր կնքած նավթային խոշոր պայմանագիրը իրականացնելու համար հարկավոր է խաղաղություն: Այդ խաղաղությունը պետք է թե Հայաստանին, թե Ադրբեջանին: Սա կարեւոր եւ հուսադրող փաստ է:

. Ֆրանսիան, որ Մինսկի խմբի նախաձեռնողներից է, համոզված է, որ հարկավոր է վերսկսել բանակցությունները քաղաքական կարգավորման շուրջ: Մեզ համար քաղաքական կարգավորումը հետեւյալն է. Ղարաբաղի ինքնավարություն Ադրբեջանի կազմում: Երկրների տարածքային ամբողջականությունը հարգելը մեր քաղաքականության հիմնական մեկնակետերից է: Սա մենք հստակորեն ասել ենք Վրաստանի դեպքում, ասում ենք Չեչնիայի իրադարձությունների կապակցությամբ:

Մյուս կողմից, նաեւ ընդունում ենք Ղարաբաղի բնակչության ադատության, դրա եռաբնիների անհրաժեշտությունը: Արդ, պետք է գտնել այս երկու հարցերի լուծումը: Սա մենք ասել ենք կողմերին:

. Ի՞նչ կարող ենք անել: Ամենից առաջ հակամարտության կողմերն իրենք պետք է լուծեն իրենց հարցը: Իհարկե, միջազգային հանրությունը միշտ ներկա է: Սակայն վերջինս կարող է բաբակցությունները, մինչդեռ խնդիրները պետք է լուծեն հակամարտող կողմերը: Միջազգային ուժերը չեն կարող մեկ կամ մյուս կողմի փոխարեն գործել, կողմերն իրենք պետք է համաձայնության գան: Եւ ոչ մի դեպքում միջազգային հանրությունը, նե ռուսյալ Ֆրանսիան, չի համաձայնի մասնակցել մի լուծման, որով քաղաքական կարգավորումը կհետաձգվի ավելի ուշ ժամանակի:

Խոսքն այն մասին չէ, որ միջազգային ուժերը տեղադրվեն հենց այնպես: Եթե դա արդյունք չի տալու, չի նպաստելու հարցի քաղաքական լուծմանը, կամ այն հետաձգելու է անորոշ ժամանակով, դա կարող է ոչիք դառնալ, որպեսզի հակամարտությունը վերսկսվի: Մի որ կողմերը հարց կտան, թե արդյոք միջազգային ուժերի ներկայությունն անհրաժեշտ է:

ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Դիպվածագիտական

ՀՈՒՇԵՐ

Հայաստանը ներկա էր Փարիզում դեռևս 35 տարի առաջ

Մեվարածավալ հայկական համայնքների գոյությունը արտասահմանում Խ. Միության դեկավարությանը դրդեց իր դեսպանատներում հայ ներկայացուցիչներ նշանակել որոշ երկրներում՝ Լիբանան, Եգիպտոս, Իրան, Մ. Նահանգներ, Իրանիա: Այսպես, 1960 թ. Փարիզի խորհրդային դեսպանատան նշանակվեց հայ ներկայացուցիչ՝ Լևոն Մանասերյանը, 1960-ին նրան հաջորդեց Մարաս Խարազյանը, որնմեկնեց 1970-ին՝ Հենրիկ Լիլոյանը, որի հուշերից դրատառներ ենք ներկայացնում ստորև: Հենրիկ Լիլոյանից հետո նշանակվեցին ևս երկու ներկայացուցիչ. 1975-ին դեսպան Ռուբեն Մահակյանը, 1980 ին Խ. Հայաստանի վերջին ներկայացուցիչը Աշոտ Մանուկյանը: Հենրիկ Լիլոյանը գրում է, թե նման առաքելություն այն ժամանակ չուներ Խ. Միության ոչ մի հանրապետություն: Դա զարմանալի չէր. Ֆրանսիայում բազմահազարանոց հայ համայնքը սերտորեն կապված էր երկրի մշակութային, գործարար և այլ շրջանակների հետ:

Ամենանային Փարիզ ժամանելուց մի քանի օր անց սեղանիս վրա հայտնաբերեցի մի ծրար: Հայտնի նկարիչ Գառզուն ինձ հրավիրում էր Ֆրանսիայի մշակույթի նախարարի կողմից իր դասվին կազմակերպվող ընդունելությանը: Երիսեյան դաշտերում, Ֆրանսիայի նախագահական դաշտին մոտ բարձրաբարհիկ մի ռեստորանում Գառզուին հանձնվեց ֆրանսիական ամենաբարձր դարգեր Պատվո լեգիոնի շքանշանը: Այն հանձնեց մշակույթի նախարար Ժակ Դյումայը: Ընդունելությանը ներկա էր Փարիզի գեղարվեստի ծաղկանին: Գառզուն ինձ անընդհատ ներկայացնում էր անվանի մարդկանց: այդ թվում նաև նախարարին, ընդգծելով. «Հայաստանի ներկայացուցիչն է»: Զգում էի, որ այդողես ներկայացնելով, վարձեր մեծ բավականություն էր ստանում:

Մի քանի օր անց մի ուրիշ կարևոր միջոցառում Լուվրում բացվել էր «Հայաստանի արվեստ Ուրարտուից մինչև մեր օրերը» մեծ ցուցահանդեսը: Լուվրի բակում այցելուների հսկայական հերթ էր: Փարիզի խոշորագույն թերթերն արձագանքեցին մեր ցուցահանդեսին, այն համարելով անճանաչելի և հրաշալի:

Անցյալ որոշ ժամանակ, մինչև դեսպանությունում կդդայինի, թե ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի միջև մշակութային կապերում որևէ նկատելի են ժամանակակից Հայաստանը, նրա բազմադարյա մշակույթը: Այն տարիներին բազմապիսի կապեր էին իրականացվում Ֆրանսիայի և Խորհրդային Հայաստանի միջև:

... Ինձ փնտրում է Լիոնի խոշոր ձեռնարկատեր Նադոլեոն Բլբիյանը: Նա իր միջոցներով ձեռք է բերել Սարդարապատի հուշահամալիրի համար հրաժշտական զանգակներ: Չելսոպովսկիայից, որտեղ ղատվիրված էին զանգակները, արդեն քանի անգամ խնդրում են հայտնել Սարդարապատում Լենինրահոսանքի ուժը: Նադոլեոնը հոգնել էր Երևան զանգահարելուց և հեռագրեր ուղարկելուց: Մակայն, չգիտես ինչու Երևանի համառորեն [illegible]էր: Ես հո հասկանում էի, որ խնդրանքը ակնջի հետև էին գցել: Դեսպանի հեռագիրը վերջ տվեց քաշքշուկին...

Այն տարիներին դեսպանությունը կաղ էր դասողանում հայկական բազմաթիվ կազմակերպությունների և անհատ մարդկանց հետ, ու նախնաբաց. Ֆրանսահայ մշակութային միությունն հետ: Միության մեջ ընդգրկված էին տարբեր համոզմունքների և գրաղմունքի տեր մարդիկ. այդ թվում նաև հայ կոմունիստներ. որոնք ձգտում էին հայ ֆրանսիական կապերում մենաշնորհ ձեռք բերել. որը դասնում էր դառնում անվերջ վիճեր և բյուրմացությունների: Քանի քանի անգամ մեր մեջ էին տեսնում մեր զույգները: Մի անգամ այդ վիճերից մեկի ժամանակ հանդիսությունս հասավ և նրանցից մեկին ուղղակի հարցրի. «Բարեկամս. դու սկզբից հայ ես, թե կոմունիստ»: «Կոմունիստ»,- հոլարտորեն դասասխանեց նա...

Հիշում եմ մի այլոյիսի դեպք: Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությանն հրամանագրով Ֆրանսահայ մշակութային միությունը 1973 թվականին դարգևատրվել էր նախագահության դասվոգով: Այդ կաղակցությամբ դեսպանությունում կազմակերդվեց ճոխ ընդունելություն, դեսպանը վաղ չխնայեց: Մի քանի հարյուր մարդ էր եկել. հայեր, ֆրանսիացիներ: Հայաստանից ժամանած դասվիրակությունը սփյուռքահայության հետ մշակութային կաղերի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի գլխավորությամբ իր հետ բերել-էր, ինչպես ընդունված է դիվանագիտական ասել, «հայրենական արտադրանքի» նմուշներ՝ կոնյակ, բասուրմա, մրգեր, անուշեղեն և այլն. որը անհատ ստանձնահատուկ տոմ տվեց տոնական սեղանին: Երբեք անեցան Համանրը:

Կարճ ժամանակից հետո, Սմիրնովը ազատվեց աշխատանքից: Իհարկե, ոչ մեր զույգի դատճառով...

Հիշողությանս մեջ տղավորվելն է նաև մի այլ դեպք, այս անգամ կապված Մարսելի հետ: Քաղաքի կենտրոնում, Պրադո դողոտայի վրա գտնվող Սուրբ Մեսրոպ սրբոց բարգմանչաց մայր եկեղեցու բակում տեղադրվեց 1915 թվականի նահատակներին նվիրված հուշարձանը: Մարսելի բորքական հյուդատարանը մեծ աղմուկ բարձրացրեց: Իր հերթին Անկարան էլ միացավ այդ աղմուկին, ընդգծելով, որ եկեղեցու բակում տեղադրված հուշարձանը կխոչընդոտի բուրք-ֆրանսիական հարաբերությունների զարգացմանը: Ֆրանսիական իշխանություններ շատ դարկեցս գտնվեցին, չհետևելով բուրքական ամբասանությունների, բացատրելով, որ դատադարտելու ոչինչ չկա, և որ հայերը իրա-



Փարիզ. 1970. Առաջ Խորհրդային. Հենրիկ Լիլոյան

զասողանը. հյուրերից ոմանք և վերջում դեսդան Արբասիմովը: Ընդունելության վերջում մի միջադեպ դատահեց:

Անդասելիորեն հայտնվեց Փարիզում գործադրման մեջ գտնվող ԽՍՀՄ արտգործնախարարի տեղակալ Անդրեյ Սմիրնովը: Սա փորձված դիվանագետ էր, մի քանի երկրներում, այդ թվում Թուրքիայում եղել է դեսդան: Վարդգես Համազասդյանն ներկայացրի Սմիրնովին: Զուրցի բանվեցինք, որի բերքդում, անշուշտ, չկարողացանք շրջանցել հասկանալու 1915 թվականի իրադարձությունները: Նկատեցինք, որ Սմիրնովը համակրանքով է խոսում բուրքերի ու Թուրքիայի մասին: «Թուրքը ազգային մեծ հպարտության տոնն է դրա հետ անհրաժեշտ է հաշվի նստել»: Համազասդյանն սկսեց հիշեցնել դարասկզբին հայ ժողովրդի գլխին եկածը: Սակայն մոսկովյան բարձրաստիճան հյուրը շարունակում էր բարբաջանքը: Աստիճան դադարեցրինք զրույցը: Երբ վերադարձանք դեսդանի տուրք հավաքված խմբին, Արբասիմովը, ընդհատելով խոսակցությունը, հարցրեց. «Այդ ինչի մասին էիք ա[illegible]դան նստելով խ[illegible]ում Սմիրնովի հետ»: Բացատրեցինք, թե ինչը:

- Լյուբաք,- կարճ կատեց դեսդանը, վերջում տեսնենք իրենց եկեղեցու մոտ դնել իրենց նախընտրած հուշարձանը: Այն օրվանից անցել է գրեթե 20 տարի: Իսկ հուշարձանը կա և մնում է իր տեղում:

Երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Առաջինը Փարիզում եղած ժամանակ մեծ շուրջ ընդունվեց խորհրդային դեսդանությունում: Դեսդան Չերվոնենկոն և Վենտիսարը բարձր գնահատեցին հայ ֆրանսիական կապերի վիճակը: Դեսդանը հավաստեց, որ դեսդանությունը և անձամբ ինքը կողատի զարգացող այդ հարաբերությունների:

Մի այլ կարևոր իրադարձություն Լուվրում հայկական խաչքարի տեղադրումը: Շնորհիվ մեր ջանքերի, Լուվրի տնօրենությունը ուշադիր կերդով ծանոթացավ հայ միջնադարյան բանդակագործությանը և խնդրեց բանգարանին տրամադրել մի խաչքար: Դեսդանի խնդրանքով Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց Լուվրին տրամադրել մեր հնագույն խաչքարերից մեկը, որ Լուվրին հանձնեց Փարիզ ժամանած մշակույթի այն ժամանակվա նախարար Ռոբեն Պարամյանը:

ՀԵՆՐԻԿ ԼԻԼՈՅԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարության խորհրդական

ԱՆՏԲԱՂԱՐՈ

Խ. Հայաստան-Ֆրանսիա հարաբերություններ

Քրիստիան Պինոն արդյոք օգնե՞ց հայրենադարձված ֆրանսահայերին

«Արջերս Փարիզում, 91 տարեկան հասակում մահացավ Քրիստիան Պինոն՝ Ֆրանսիայի դեսդական ու բաղաքական հայտնի գործիչներից մեկը, որի անունն ինչ-որ չափով ասոցվում է Խ. Հայաստան-Ֆրանսիա բաղաքական հարաբերությունների դատմությանը, որոնք էլ որ դա դժվար է Մոսկվայով միջնորդավորված այդ անկանոն, անաղղակի կապերը «բաղաքական հարաբերություններ» անվանելը: 1956 թ-ին, երբ Պինոն դեռևս նոր էր նշանակվել Ֆրանսիայի արտգործնախարար, Մոսկվայից հետո դատասդանական հանդամանքով նա ժամանեց Երևան, որ նրա այցը բաղից ոչ պակաս միջդետական, որքան ազգային-բաղաքական բնդդի հետևեր: Այդ մասն է դատմում տվյալ ժամանակաշրջանի հարցերին բացահայտ մեր աշխատակիցը՝ 1970-1975 թթ-ին Ֆրանսիայում Խ. Միության դեսդանատան առաջին բարտուղար Հենրիկ Լիլոյանը:

1956 թ. մայիսի 22-ին Երևանի օդանավակայանը սովորականից ավել մարդաշաս էր: Մոսկվայից ժամանում էր Ֆրանսիական կառավարական դատվիրակությունը արտաքին գործերի նախարար Քրիստիան Պինոյի գլխավորությամբ: Երբ ինքնաթիռի շարժիչները կանգնեցին, սանդուղքով արագորեն իջավ նախարար Պինոն: Նրան հետևեցին Մոսկվայում Ֆրանսիայի դեսդան Մորիս Դեժանը, Ֆրանսիայում ԽՍՀՄ-ի դեսդան Սերգեյ Վինոգրադովը, ԽՍՀՄ արտգործնախարարության եվրոդական առաջին բաժնի վարիչ Համազասդ Հարությունյանը, Ֆրանսիական առաջատար բերքերի և տեղեկատվական գործակալությունների ներկայացուցիչները:

Օդակայանից դուրս գալուն դես, դիմավորողներից մի քանի տասնյակ մարդ մոտեցան Քրիստիան Պինոյին և վարժ Ֆրանսերենով սկսեցին խոսել իրենց հոգսերի մասին, որը ամփոփվում էր մի նպատակասդությամբ. «Օգնեցեք մեզ վերադառնալ Ֆրանսիա»: Նախարարը, ժդտալով, սեղմում էր նրանց ձեռքը, ինչ-որ բան խոստանում: Ոստիկանները փորձում էին ժողովրդին հեռ մղել, որդեսզի նախարարը մոտենա դռները բաց ավտոմեքենային:

«Մեր ուղեորությունը կազմակերդված է այնդես, որդեսզի ես կարողանամ այցելել հայկատես Երևանը, և ես առանձնատես երջանիկ եմ դրանով: Այս առիթը ես կօգտագործեմ, որդեսզի ձեզ հանձնեմ Ֆրանսիական կառավարության «բարեկամական և խաղաղության ոգերը», ասաց Պինոն դատասդանական առաջին հանդիդման ժամանակ:

Այցը տևեց մի քանի օր: Պինոն ինչ-որ չափով ծանոթացավ Հայաստանի հետ, կարճատև շփումներ ունեցավ մարդկանց հետ, տդտավորություններ ստացավ Հայաստանի, նրա մշակույթի մասին: Սա կայն այցի բուն դատճառը այդդես էլ մնաց անհայտ: Լուրեր էին տարածվում, թե Ֆրանսիայի նախարարը Երևան էր ժամանել ստացված բազմաթիվ դիմումների դատճառով, որոնցում հայաստանցի ներգաղթած ֆրանսահայերը ցանկանում էին արտագաղթել այս անգամ դեպի Ֆրանսիա:

Պետք է ասեմ, որ այն ժամանակ 60 ականների կեսերին, Կենտկոմում, գործի բերմամբ, ես առնչվում էի նման հարցերին, տեղյակ էի բազմաթիվ դիմումների ճակատագրին, հաշ գիտեի, թե ինչդիսի դժվարությունների հետ է կատված այդ ամենը: Սովորաբար նշված հարցերով հիմնականում զբաղվում էր ՕՎԻՐ-ը, որը մտնում էր ներքին գործերի նախարարության համակարգի մեջ:

Սակայն դա իսկական այրկատդություն էր: Այս բնագավառը դատկանում էր միայն դետական անվտանգության կոմիտեին: Նրա ղեկավարն էր, որ կանոնավոր կերդով, անմիջատես, առանց միջնորդի, շփվում կենտկոմի առաջին բարտուղարի հետ, որը և դիտի որոշեր այս կամ այն անձի արտասահման մեկնելու հնարավորությունը: (Անշուշտ, խոսքը մշտական բնակության մասին էր): Սակայն իրականում գործում էին միայն ՊԱԿ-ի առաջարկությունները:

ՊԱԿ-ն ուղղակի իրեն առդահովագրում էր հետագա անախորժ դեպքերից, շեշտելով, որ տվյալ մարդը կարող է վնաս ներկայացնել երկրի շահերին: Հիշում եմ մի բշտա մարդու, որի ազգանունը չեմ կարող մտաբերել: Աշխատում էր ինչ-որ լաբորատորիայում: Հայաստանում չուներ և ոչ մի հարազատ: Մեր զույգերը նրա հետ մշտապես ավարտվում էին նրա լաց ու կոծով: Ավելին, նա հիվանդ էր, չուներ և ոչ մի խնամող: Իսկ նրա բարերը և եղբայրները բնակվում էին Ֆրանսիայում և աղաչում էին միանալ իրենց: Այդ բշտա մարդու ճակատագրի որոշումը տևեց մի քանի երկար ամիսներ: Կենտկոմի առաջին բարտուղար Ջարոբյանի հանբերությունը հասեց և նա դիմեց ՊԱԿ-ի նախագահին (իմ ներկայությամբ).

- Չեմ հասկանում, ընկեր Բաղդասյանց, ի՞նչն է դատճառը, որ դուք այդ դեպքերը առարկում եք: Այս մարդը մոտ մեկ տարի է, ինչ մաշում է մեր բեմը:

Բաղդասյանցը միայն կմկմաց. «Ինձ այդդես են զեկուցում մեր ծառայությունները ...»:

Պահանջվեց ևս երկու ամիս, որդեսզի այդ մարդուն վերջապես թույլ տան միանալ իր հարազատներին:

Սա միակ դեպքը չէր, երբ Ֆրանսիական բարձրաստիճան գործիչները դիմում էին խորհրդային իշխանություններին, խնդրելով նդաստել հայազգի բաղաքացիներին Ֆրանսիա վերադառնալուն: Այսդես, օրինակ, երկար աբշերուկներից հետո չէր լուծվում կիրովականցի Տեր Սարգսյանի ընտանիքի վերադարձը Ֆրանսիա՝ իրենց հարազատներին միանալու համար: Այդ մասին Ֆրանսուա Միտերանը միջնորդել էր Մոսկվային 1984 թ., իր դատասնական այցի ժամանակ: Եվ միայն 1987 թ. Տեր Սարգսյանները վերջապես վերադարձան Ֆրանսիա: Փարիզի բերքերը տդտագրել էին այս ընտանիքի լուսանկարները: Աղմուկը մեծ էր: Քաղաքական վնասը Խ. Հայաստանի համար՝ ավելի մեծ:

Վերադառնանք Պինոյի այցին.

... 1965 թվականի աշնանը մի առիթով եղա խորհրդային անվանի դիվանագետ Համազասդ Հարությունյանի մոսկովյան բնակարանում: Նա այն ժամանակ աշխատում էր ԽՍՀՄ արտգործնախարարությունում, կանդդայից վերադառնալուց հետո, որտեղ աշխատում էր որդես արտակարգ և լիազոր դեսդան: Վերհիշեց Պինոյի Հայաստան այցը.

- Գիտե՞ք, յափազանցություն կլինի կարծել, թե Պինոն այն ժամանակ Հայաստան էր ժամանել հայերի հարցով զբաղվելու համար: Ճիշտ է, Ֆրանսիացիները մտահոգված էին ազգությամբ հայ իրենց բաղաքացիների ճակատագրով, առավել ևս որ նրանք չէին կարողանում հարմարվել Հայաստանում իրենց նոր կյանքին: Պինոն երբեմն խոսում էր Ֆրանսիայից արտագաղթած հայերի մասին, սակայն միայն մեզանից ինչ-որ տեղեկություն ունենալու համար: Իսկ թե ի՞նչ մտադրություն ուներ՝ չգիտեմ: Նա, ենթադրում եմ, գերազանցորեն հասկանում էր, որ իրենց շահագրգռվածությունը հայերի վերաբերյալ հարցի հարուցմանը Մոսկվայի կողմից կարող էր գնահատվել որդես մեր գործերին միջամտելու փորձ ... Այնուամենայնիվ Ֆրանսիացիները հայերի հարցով հետաքրքրվում էին, և մենք ստիդված էինք ինչ-որ բաներ ընդառաջել: Իսկ թե երևանից հետո ինչ որոշեցին՝ տեղյակ չեմ...

... երևանից Քրիստիան Պինոյի մեկնելուց հետո մի առ ժամանակ անց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոն ճնարկեց «ընկ. Բաղդասյանցի հաղորդումը Քրիստիան Պինոյի կողմից գլխավորած ֆրանսիական դատվիրակության դիմավորման մասին» հարցը: Ահա մի հատված այդ որոշումից:

Կենտկոմի բյուրոն որոշում է.

1. ՀՍՍՀ ՊԱԿ-ին (ընկ. Բաղդասյանց), եւ ՀՍՍՀ ՆԳՆ-ին (ընկ. Պիսկունով) մշակել միջոցառումներ արտասահմանյան դատվիրակությունների ընդունումը եւ ուղեկցումը բարելավելու համար, կարգ ու կանոն ադահովել, ինչդես դիմավորման ժամանակ, այնդես էլ հյուրանոցի մոտ:

2. Կուսակցության հանդամանքային եւ շրջանային սովետների գործադիր կոմիտեներին՝ ուժեղացնել բաղդասիարակչական աշխատանքը ներգաղթած բնակչության միջավայրում, նրանց ներգրավել հասարակական ակտիվ աշխատանքներին՝ բաղաքային, շրջանային, ավանային եւ գյուղական սովետներում եւ հասարակական այլ կազմակերդություններում, միջոցառումներ ձեռնարկել ներգաղթածների մշակութային կենցաղային դդայմանների բարելավման, ավանների բարեկարգման համար, ուշադրություն դարձնելով նրանց աշխատանքի տեղավորմանը:

ՀԿԿ Կենտկոմի բարտուղար
Յա. Ջարոբյան

Ահա՛ս, ուստ ահա՛ս, որ Քրիստիան Պինոն այդ մասին այդդես էլ ոչինչ չմնացավ: Չէ՞ որ այս որոշումը խիստ գաղտնի էր ...

ՀԵՆՐԻԿ ԼԻԼՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ոտեակաց

ԲՈՒՐԲՈՆՅԱՆ ՊԱԼԱՏ

Ֆրանսիայի Ազգային ժողովը՝ օրինաց կաճառ

Մեկ շաբաթ պատգամավորի կյանքից

Փարիզի Կոնկորդ (Համաձայնության) հրապարակի դիմաց, Ալեքսանդր III-ի կամրջից այն կողմ երևում է Բուրբոնյան պալատը՝ Ֆրանսիայի Ազգային ժողովի վիհաբուխ շենքը: Սա ոչ միայն Ֆրանսիայի մայրաքաղաքի տեսարժան վայրերից է, այլև հանրապետության քաղաքական համակարգի հենասյուներից մեկը: Պալատի ճակատային մասը կառուցված է նոր հելլենական ոճով: Սակայն չխաբվեք շքամուտքի սանդուղքի լայն ու բարձր աստիճաններով, նրանք ոչ մի տեղ չեն տանում, խաղալով զուտ դեկորատիվ բնույթ: Ֆրանսիայի Ազգային ժողովի խորհրդարանական շքամուտքը կոչվում է նաև «օրինաց տաճար»: Նշենք միայն, որ այս պալատը կառուցվել է 18-րդ դարի 20-ական թվականներին Լյուդովիկոս 14-րդի եւ նրա սիրուհու մարկիզուհի դը Մոնտեսպանի օրինականացված դուստր Լուիզ Ֆրանսուազ դը Բուրբոնի համար: Դժվար թե այն ժամանակ որևէ մեկը ասեր, որ սոֆոնիֆի միաբանական վերնախավի զվայրենիների ու հրճվանքների համար կառուցված շենքը կդառնա դարաշրջանի իսկական կաճառ:

Ինչպե՞ս: Գնանք Համալսարանական փողոց ու մտնենք նրա: Իհարկե, նախ մանրակրկիտ կստուգեն ձեր փաստաթղթերը, մի քանի անգամ համեմատելով ձեր դեմքը փաստաթղթի լուսանկարի հետ: Եթե ձեզանից բղաղանակ կամ ճամպրուկ կա, այն կանցկացվի ռենտգենի սարքի միջով:

Նախագահականի հետ մեկտեղ խորհրդարանական ընտրությունները հանդիսանում են Ֆրանսիայի առավել կարևոր քաղաքական իրադարձությունը: Ինչպես է կազմակերպված Ազգային ժողովի գործունեությունը: Այն ընտրվում է 5 տարի ժամանակով եւ այսօր միավորում է 577 պատգամավոր՝ 555 մետրոպոլիայից եւ 22 անդրծովյան դեպարտամենտներից ու տարածքներից: Հետևաբար երկրի ողջ տարածքը բաժանված է 577 ընտրական տեղամասերի: Օրենքը սահմանում է, որ իր լիազորությունները կատարելիս պատգամավորը պետք է ազատ ու անկախ լինի եւ որևէ իրավաբանական պարտավորություններ չկրի ընտրողների նկատմամբ: Վերջիններս էլ ունեն պատգամավորի վրա ազդելու միայն մեկ հնարավորություն՝ ընտրության միջոցով: Պատգամավորի հրաժարականի կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում նրա տեղը ավտոմատ կերպով զբաղեցնում է տեղակալը կամ անձնավոխանորդը, որն ընտրվում է պատգամավորի հետ միասին: Օրինակ, պատգամավորը նշանակվում է նախարար (եւ այդպես իրավունք չունի մնալու խորհրդարանի կազմում), նրա տեղը բավական չի մնում, իսկույն ներ այն զբաղեցնում է տեղակալ պատգամավորը:

Ինչպիսի՞ն է Ֆրանսիական պատգամավորի աշխատանքային շաբաթը: Ի դեպ, հիշեցնենք, որ Ֆրանսիայում միայն Ազգային ժողովի անդամը պատգամավոր անվանվելու իրավունք ունի: Ենթադրենք, նրա կյանքի ռիթմը համընկնում է պրոֆեսիոնալ ռիթմի հետ: Դյուրոնը, նա ընտրված է Ֆրանսիայի գավառից: Ուստի խորհրդարանի տարին երկու անգամ գումարվող նստաշրջանների օրերին երեքշաբթի օրվանից մինչև հինգշաբթի նա Փարիզում է ու մասնակցում է նիստերին:

Պատգամավորը ժամանում է Փարիզ գնացքով կամ ինքնաթիռով: Ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ Սենատի անդամն իրավունք ունի անվճար օգտվելու գնացքի առաջին կարգից եւ տարեկան 30 անգամ «Էր Ֆրանս» ավիաընկերության ինքնաթիռներից:

Ժամանելով Բուրբոնի պալատ, նա մտնում է փոստի ծառայություն, ստանում իրեն հասցեագրված նամակները: Յուրաքանչյուր պատգամավոր ունի այստեղ իր փաստաթղթերի օրական Ազգային ժողովից ուղարկվում է 60 հազար նամակ, նրանք հաջորդաբար երկրորդներ են ուղղել:

«Կորցրած թղթերի սրահում» որն. Դյուրոնը հնարավորություն ունի ծանոթանալ «Ֆրանս-որես» գործակալության լրատվական ժապավենին: Եթե նրան անհրաժեշտ է ինչ-որ գիրք կամ բերք կարդալ, պատգամավորը դիմում է Ազգային ժողովի գրադարան, որը 700 հազար կոր գիրք ունի, այդ թվում շատ հազվագյուտ գրականություն: Գրադարանի ու ներքնահարկի գրադարանների պահարանների ընդհանուր երկարությունը կազմում է 18 կմ:

Դահլիճ մտնելուց առաջ որն. Դյուրոնը «չորս սյուների սրահում» լսում է իր գործընկերոջ հաղորդագրությունը: Այստեղ նա նույնպես զրուցում է լրագրողների հետ:

Ազգային ժողովի նիստերի դահլիճը ամֆիթատրոն կիսաշրջանի տեսք ունի: Պատգամավորները տեղավորվում են ըստ կուսակցական պատկանելության՝ կոմունիստներն ու սոցիալիստները ձախից, «Ֆրանսիական ժողովրդավարության միություն» ցենտրիստական կուսակցությունը ու «Միավորում հանուն հանրապետության» գոլիստական շարժման անդամները կենտրոնում ու աջից, այդ բերում ազգայնական «Ազգային ճակատի» պատգամավորները:

Քվեարկելու համար պատգամավորներն ունեն երեք կոճակով հատուկ սարք, որը բանալիով է փակված: Քվեարկության արդյունքները երևում են էլեկտրոնային ցուցանակի վրա: Ազգային ժողովի անդամները հնարավորություն ունեն նիստերի ընթացքին հետևել իրենց աշխատասենյակներում: Դրա համար սենյակներում կա գնդակ հիշեցնող ռադիոկոնս, որը պատգամավորների կողմից «բոթակ» անվանվել է արժանացել: Սեղմիր կոճակը ու կմիանա Սենատի նիստերի դահլիճը: ԱԺ-ի պատգամավորների, նրանց օգնականների ու պալատի աշխատակազմի տրամադրության տակ են 1170 աշխատասենյակ, 30 նիստերի դահլիճ, 8 հարկանի ստորգետնյա կանգառ ավտոմեքենաների համար:

Ելույթից հետո պատգամավորը կարող է գնալ ԱԺ-ի հեռուստաձայնագրության, որ տեսագրվում են բոլոր նիստերը: Այդ ժապավենները պահպանվում են ԱԺ-ի տեսադարանում եւ յուրաքանչյուր ելույթ ունեցող կարող է դիտել դրանք սխալները ուղղելու համար: Հեռուստաձայնագրերը կարող են դիմել այս ծառայությանը անհրաժեշտ տեսագրություն ստանալու համար:

Օրվա վերջին որն. Դյուրոնը սովորաբար գնում է ԱԺ-ի սրահ մի քիչ հանգստանալու: ԱԺ-ն փոքրիկ քաղաք է. մարզասրահից բացի, այստեղ կա ռեստորան, բերի ու ծխախոտի կրպակ, հյուրանոց, գոլֆի հրապարակ, վարսավիրանոց ու անգամ ֆինեական բաղնիք:

Ազգային ժողովում մեզ բերեցին հեսարիր փաստեր խորհրդարանի այս պալատի առօրյայից: Բուրբոնի պալատի կաստային գտնվող հոգոյնը փոխվում է տարին 1718 անգամ, քանի որ շուտ է կեղտոտվում: Պալատի ճակատային մասի սյուների վերեի մասում հատուկ սրած ձողեր են տեղադրված, որպեսզի փարիզյան աղավնիները չաղտոտեն այդ կորողը: Շենքի առջեի արձաններն արհեստական նյութից են, իսկականները՝ քարից՝ վերանորոգվում են: Ազգային ժողովի շենքի վարագույրները 5,5 մետրի բարձրություն ունեն: Ազգային ժողովը տարեկան արտադրում է 50 տոննա կամ 12 մլն էջ բուղթ, պատգամավորները օրական միջինը 26 հազար հեռախոսազանգ են ստանում: Ի դեպ, նրանք պարտական են նիստի ներկայանալ միայն ու միայն վողկոպով: Այս հեստրիական վիճակագրությունը ավարտենք Ազգային ժողովի ներքնահարկում: Այստեղ բնակվում են ... 20 կատու, որոնց սնունդը, սակայն, չի նախատեսված Ազգային ժողովի բյուջեով: Վերջապես այստեղ 1794 թ. ի վեր պահպանվում են Փարիզի եկեղեցիների երեք զանգակ: Սկզբում մտադրություն կար դրանք ձուլել բնդանոթներ պատրաստելու համար, սակայն հետագայում մոռացության մատնվեցին:

Հինգշաբթի երեկոյան որն. Դյուրոնը գնացքով վերադառնում է իր քաղաք: Նրա համար սկսվում է աշխատանքային երկրորդ շաբաթը, քանի որ հաջորդ օրն իսկ առավոտյան նա պիտի հանդիպի իր դեպարտամենտի բնակիչների հետ. ծանոթանա նրանց կյանքին: Այդ փորձը հենց օգտակար կլինի օրենսդրական աշխատանքում, օրենքներն ընդունելու ու բարելավելու գործում:

Շաբաթ օրը, հետմիջօրեին, որն. Դյուրոնը հանդիպում է իր ընտրողների հետ: Շրջում է քաղաքով, ոտքով՝ ինչ բարեկամներին, օգտվում է առիթից, որ նրանց տեղեկացնի, որ մտադիր է պատգամավոր վերընտրվել:

Վերջապես, ինչպես իր գործընկերներից շատերը, որն. Դյուրոնը ոչ միայն պատգամավոր է, այլեւ իր քաղաքի քաղաքագլուխ: Քաղաքապետարանի անդամների հետ նա խանգարելուց հետո նա Ֆրանսիական եռագույնն ուսին, հայտարարում է նորատպակների ամուսնություն: Կիրակի օրը նա կնվիրի իր ընտանիքին՝ դա իր հանգստի միակ օրն է: Երկուշաբթի օրը նա մասնակցում է տեղական նշանակություն ունեցող միջոցառման բացմանը, իսկ երեկոյան նստում գնացքի, ուղեորվելով դեպի Փարիզ: Ճանապարհին ուսումնասիրում է մի քանի փաստաթուղթ, որոնք պետք կլինեն սկսվող աշխատանքային շաբաթվա ընթացքում:

Չմոռանանք նշել, որ որն. Դյուրոնն իրավունք ունի օգնել իր ընտրողներից մի քանիսին մուտք գործելու Բուրբոնի պալատ: Առավոտյան ժամանած առաջին 10 այցելուները կարող են մտնել ԱԺ-ի շենք առանց որեւէ հրավերի: Նրանք զբաղեցնում են հատուկ օթյակ, որ առանձնացած է նիստերի դահլիճից եւ մամուլի օթյակից: Ոչ, այդքան էլ դյուրին չէ Ֆրանսիական պատգամավորի կյանքը ...





Չմոռանանք ասել լրագրողների իրավունքների մասին: Խորհրդարանի մասին գրող լրագրողներ միավորված են պատգամենական մամուլի ասոցիացիայի շրջանակներում: ԱԺ-ի նիստերին մասնակցելու համար ցանկացած լրագրող պետք է ներկայանա ԱԺ-ի մամուլի ծառայություն, որ նա կարող է ստանալ ցանկացած տեղեկատվություն նիստերի օրակարգից ու զեկուցման տեքստերից մինչեւ ցանկացած պատգամավորի լուսանկարն ու մանրամասն կենսագրությունը:

Շաբաթ մեկ, չորեքշաբթի օրերին Ֆրանսիական «Ֆր-2» հեռուստաընկերությունը ուղիղ հեռարձակում է տալիս ԱԺ-ի նիստերից, որ խորհրդարանականների ու կառավարության անդամների հարց ու պատասխանների ժամն է: Այդ հեռարձակումների ժամանակ նիստերի դահլիճը սովորաբար լեփ-լեցուն է, այնինչ հասարակ օրերին ԱԺ-ի ամֆիթատրոնում հազիվ 10-20 հոգի ներկա լինի: Ի դեպ, Ֆրանսիայի նախագահն իրավունք չունի գալ ԱԺ-ի դահլիճ, համենայնդեպս 1958 թվականից իր ժամանակագրությունն առած 5-րդ հանրապետության օրոք ոչ գեներալ Շալ դը Գոլը, ոչ Ժորժ Պոմպիդուն, ոչ Վալերի Ժիսկար դ'Էսթենը, ոչ էլ 14 տարի երկիր ղեկավարած Ֆրանսուա Միտերանն իրենց նախագահության շրջանում ոչ մի անգամ մուտք չեն գործել ԱԺ:

ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Փարիզ

Տոն, որ միշտ քեզ հետ է

Փարիզի տեսիլքը մեզ համար երևակվում է Աստվածամոր տաճարով, Լուվրի դղյակով, Հաղթական կամարով և Էյֆելյան աշտարակով, որոնց ամբողջականությունը մարմնավորում է քաղաքի դասական-խորհրդանշական դիմակերը: Սակայն ճարտարապետական այս կորդները նշանավորում են Ֆրանսիայի դասմության և մշակույթի տարբեր դարաշրջաններ, որոնց բաժանող ժամանակային ու քաղաքակրթական սահմաններն այժմ հալվել են Անցյալի ընդհանրական ժառանգության լուսաբերտի մեջ կերտելով հավերժ երիտասարդ ու կենդանի միջնեն քաղաքի կերպարը:

Պատմությունն առաջ է ընթանում. նրա հետ դիմափոխվում է քաղաքակրթությունը. որ շարունակում է նյութական արժեքներով դրսևորվել տարածության ու ժամանակի մեջ: Քաղաքաշինական ճարտարապետությունը դարս է դասասխանել մշակութային նոր դասկերացումներ ու ճաշակի դասահանջներին: Սակայն, դեռևս 70-ականների կեսին փարիզեցիները շարունակում էին ատրել մեծաշուք ու գեղեցիկ անցյալի ճարտարապետ հին երազով չդասկերացնելով մոդեռնիզմի հազարաբերան շնչի բերեն հոտմն անգամ դաշտելի քաղաքի դասկերացությունը: Գացն այս դասճառով է, որ Առվեսի մայրաքաղաքը գիջում էր ուրբանիստական ճարտարապետության ժամանակակից հասանքների ու ծավալաձևերի առաջնության ասպարեզում: Քաղաքը կոմֆ-ինությունների ամբողջականություն չէ, այլ հարափոփոխ կենդանի օրգանիզմ, որի բարախող զարկերակի ներքին շրջանառությամբ խաչագող հոգեոր էությունը ներշնչում է նրա արտաքին տեսքը՝ սերունդների հայացքը, երևակայությունն ու հիշողությունը ձևելով իր հերթական փուլը բոլորող քաղաքակրթության կերոյն ու ոգին արձանագրող ճարտարապետական հուշարձաններով:

Եվ ահա, սիրելի Փարիզի իկոնային-դասական դասկերը խախտվեց Ժորժ Պոմպիդոյի Կենտրոնի արտաքոց ու շոնդալից համալիրի հայտնությամբ, որ նշանավորեց 70-80-ականների մշակութային ալիքի քաղաքաշինական իմաստասիրությունը ֆրանսիական իրականության մեջ, և որ, բելադրելով իր կերդարը հարդ բաղամասին կրթական-ինտելեկտուալ, գեղարվեստական ու ժամանցային յուրօրինակ երիտասարդական կենտրոն է այժմ:

Նոր Փարիզի կենտրոնը դարձավ նախագահ Ֆրանսուա Միտերանը, որի նախաձեռնած կառուցդրությանն անհարիր, ժամանակի ընթացքում անբաժանելիորեն կցվում է ազգային ճաշակի դասկերացմանը: Այդպես դարասկզբի ամերիկածին ճարտարաշինական հեղափոխության ֆրանսիական արձագանքը Էյֆելյան աշտարակն այժմ Փարիզի խորհրդանիշն է, իսկ Պոմպիդուի կենտրոնի հակադասական համալիրը դադարել է ցնցել դիտողներին բնաղատկերային ամբողջականությամբ ձուլվելով քաղաքահատվածի տեսարանին:

Փարիզի նոր իմաժը կերտում են Բաստիլի օպերան, Դելֆանսի Մեծ կամարն ու «երկնաքեր» բաղամասը, Ֆինանսների նախարարության շենքը, Լուվրի ապակյա բուրգերը, Արաբական աշխարհի ինստիտուտը, Լա Վիլեթի քաղաքահամալիրը, ուրանցից յուրաքանչյուրը, արձանագրելով ճարտարապետության և շինարարական արվեստի արդի նվաճումներն ու նորարարական տենչը, առանձնանում է մտահղացման ինքնատիպությամբ ու եզակիությամբ եր, դահիրանելով այդպիսանդերձ ֆրանսիական մշակույթի նրբաթիմ ու վայելչագեղ երեսույթը ներդաշնակորեն ներգրվում է ընդհանուր մթնոլորտում:

Փարիզի ներկա ուրբանիստական դասկերազրության առանձնահատկությունն այն է, որ «Միտերանի բուրգերը» (ինչպես մկրտվել է նախագահի քաղաքաշինական ծրագիրը մամուլում) ճարտարվեստում բյուրեղացած մշակութային դասմական շերտերի ամբողջականությունից չեն զատվում քաղաքաշինական սահմանաեզրերով. այլ սերտաճած ընդհանուր հյուսված-ին հնչում են հավասար տնայնությամբ նոր ոգու տենչը խտանելով հնի հետ, տարածադասկերային արդի ընկալումը մերձելով դասական հայացքի մեջ: Այդպես Նաղոլեոնի շքաբակում, Լուվրի կլասիցիստական դղյակի դիմաց կարող են համարձակ մտահղացմամբ խոյանալ աղակեիայի մոդեռն բուրգերը, ինչպես Սենս-Էրսաբ եկեղեցու հարևանությամբ հանգրվանում են Պոմպիդուի կենտրոնի գործարանատուն խողովակները:

ների ու ճաշակի դասահանջներին: Սակայն, դեռևս 70-ականների կեսին փարիզեցիները շարունակում էին ատրել մեծաշուք ու գեղեցիկ անցյալի ճարտարապետ հին երազով չդասկերացնելով մոդեռնիզմի հազարաբերան շնչի բերեն հոտմն անգամ դաշտելի քաղաքի դասկերացությունը: Գացն այս դասճառով է, որ Առվեսի մայրաքաղաքը գիջում էր ուրբանիստական ճարտարապետության ժամանակակից հասանքների ու ծավալաձևերի առաջնության ասպարեզում: Քաղաքը կոմֆ-ինությունների ամբողջականություն չէ, այլ հարափոփոխ կենդանի օրգանիզմ, որի բարախող զարկերակի ներքին շրջանառությամբ խաչագող հոգեոր էությունը ներշնչում է նրա արտաքին տեսքը՝ սերունդների հայացքը, երևակայությունն ու հիշողությունը ձևելով իր հերթական փուլը բոլորող քաղաքակրթության կերոյն ու ոգին արձանագրող ճարտարապետական հուշարձաններով:

Եվ ահա, սիրելի Փարիզի իկոնային-դասական դասկերը խախտվեց Ժորժ Պոմպիդոյի Կենտրոնի արտաքոց ու շոնդալից համալիրի հայտնությամբ, որ նշանավորեց 70-80-ականների մշակութային ալիքի քաղաքաշինական իմաստասիրությունը ֆրանսիական իրականության մեջ, և որ, բելադրելով իր կերդարը հարդ բաղամասին կրթական-ինտելեկտուալ, գեղարվեստական ու ժամանցային յուրօրինակ երիտասարդական կենտրոն է այժմ:

Նոր Փարիզի կենտրոնը դարձավ նախագահ Ֆրանսուա Միտերանը, որի նախաձեռնած կառուցդրությանն անհարիր, ժամանակի ընթացքում անբաժանելիորեն կցվում է ազգային ճաշակի դասկերացմանը: Այդպես դարասկզբի ամերիկածին ճարտարաշինական հեղափոխության ֆրանսիական արձագանքը Էյֆելյան աշտարակն այժմ Փարիզի խորհրդանիշն է, իսկ Պոմպիդուի կենտրոնի հակադասական համալիրը դադարել է ցնցել դիտողներին բնաղատկերային ամբողջականությամբ ձուլվելով քաղաքահատվածի տեսարանին:

Փարիզի նոր իմաժը կերտում են Բաստիլի օպերան, Դելֆանսի Մեծ կամարն ու «երկնաքեր» բաղամասը, Ֆինանսների նախարարության շենքը, Լուվրի ապակյա բուրգերը, Արաբական աշխարհի ինստիտուտը, Լա Վիլեթի քաղաքահամալիրը, ուրանցից յուրաքանչյուրը, արձանագրելով ճարտարապետության և շինարարական արվեստի արդի նվաճումներն ու նորարարական տենչը, առանձնանում է մտահղացման ինքնատիպությամբ ու եզակիությամբ եր, դահիրանելով այդպիսանդերձ ֆրանսիական մշակույթի նրբաթիմ ու վայելչագեղ երեսույթը ներդաշնակորեն ներգրվում է ընդհանուր մթնոլորտում:

Փարիզի ներկա ուրբանիստական դասկերազրության առանձնահատկությունն այն է, որ «Միտերանի բուրգերը» (ինչպես մկրտվել է նախագահի քաղաքաշինական ծրագիրը մամուլում) ճարտարվեստում բյուրեղացած մշակութային դասմական շերտերի ամբողջականությունից չեն զատվում քաղաքաշինական սահմանաեզրերով. այլ սերտաճած ընդհանուր հյուսված-ին հնչում են հավասար տնայնությամբ նոր ոգու տենչը խտանելով հնի հետ, տարածադասկերային արդի ընկալումը մերձելով դասական հայացքի մեջ: Այդպես Նաղոլեոնի շքաբակում, Լուվրի կլասիցիստական դղյակի դիմաց կարող են համարձակ մտահղացմամբ խոյանալ աղակեիայի մոդեռն բուրգերը, ինչպես Սենս-Էրսաբ եկեղեցու հարևանությամբ հանգրվանում են Պոմպիդուի կենտրոնի գործարանատուն խողովակները:



կառուցվածքների «օտար, աղազգային» շնչի մեջ կորչում է ձեռավորված-ավանդական ճարտարապետական իդեալի ֆրանսիականությունը: Սակայն, մշակութային նորատեղծ, ժամանակակից երևույթները, անցյալ դասանալու հետ դասականության արժեքույթ ձեռ բերելով, միաժամանակ հարստացնում ու բազմակիացնում են ազգային ինքնատիպություն համարվող գեղարվեստական ձևերը: Եվ այն ինչ համարվում է օտարամուտ ու ավանդական մշակութամտածողության անհամատեղելի, ինչպես Սենս-Էրսաբ եկեղեցու հարևանությամբ հանգրվանում են Պոմպիդուի կենտրոնի գործարանատուն խողովակները:

«Փարիզը տոն է, որ միշտ քեզ հետ է», որ տոնականության զվարթ արձագանքներն արտացոլվում են քաղաքի մշտապես կիրակնօրյա, երբեք չմանձրացնող շեղ հագուստի ծալքերում, որ նույն հարթության վրա ներկայացնում է դարերի դիմագծերի հավասական բույլը, և որ անցյալն ու ներկան, ելևէջվելով երգեհոնի բազմաձայն ներդաշնակությամբ, մի հայացքի ընդգրկելիությամբ հնչեցնում են ֆրանսիականության հիմնը:

ՆԱՀԱՊԵՏԻ ԴԱՐԻԲԵԿՅԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Էյֆելյան աշտարակը՝ Փարիզի հավերժ խորհրդանիշ

«Մենք բողոքում ենք գնդերիթներով ամրացված երկաթից այս սյան դեմ», այսպես բորբոքված էին գրում Գի դը Մոպասանը, Ալեքսանդր Դյումա որդին, ֆրանսիական մշակույթի ու արվեստի մյուս գործիչները՝ երկրի իշխանություններին ուղղված բողոքի նամակում հմայից զուրկ կմախք էին որակել 1889 թվականի մարտի 31-ին բացված աշտարակը Սենայի ձախ ափին կանգնած, որին հիշ անց ողջ աշխարհը կանվանի էյֆելյան: Ինչո՞ւ ֆրանսիացիները պիտի իրենց մոտ կառուցեն այս հսկան և այլանդակեն Փարիզի տեսքը, երբ նույնիսկ ամերիկացիները հրաժարվեցին այդ նախագծից, ասված էր նամակում:



Դժվար թե աշտարակի հայրը՝ 55 տարեկան ճարտարապետ Գյուստավ Էյֆելը (իսկական ազգանունն է Բոնիկհաուզեն) պատկերացներ, որ իր գյուտը կդառնա Փարիզի խորհրդանիշ, կիմայի միլիոնավոր մարդկանց: Իսկ սկզբում ամեն ինչ անորոշ ու անհայտ էր: Չէ որ աշտարակը նախագծված էր ֆրանսիական մեծ հեղափոխության 100 ամյակին նվիրված համաշխարհային ցուցահանդեսին և պետք է առամոնտաժվեր 20 տարի անց:

Աշտարակի նախագիծը պատանցեց էյֆելի գլխավորած 50 ճարտարապետների մեկուկես տարվա լարված աշխատանքի, որի արդյունքում գծվեց 5300 գծագիր: Կառույցի յուրաքանչյուր մասը 3 տոննայից ավելի էր ուներ: Էյֆելի մեկ այլ՝ հիրավի հեղափոխական մտահղացումը կայանում էր նրանում, որ աշտարակը կառուցվեր նախօրոք մոնտաժված հատվածներից, որոնք հետագայում հավաքվեցին մանկական խաղի՝ կոնստրուկտորի ձևով: Հետաքրքրավալ է, որ հայտարարված մրցույթին մասնակիցդարձան ավելի քան 700 նախագիծ, որոնք պիտի փառաբանեին ֆրանսիական տեխնիկական մտքի նվաճումները, էյֆելը եղավ այդ 700-ից մեկը:

Քչերը գիտեն, որ աշտարակը փրկվեց ապամոնտաժումից, այսինքն՝ ոչնչացումից... գիտության շնորհիվ: Գ. էյֆելն աշտարակի կատարին տեղադրեց գիտական լաբորատորիաներ, որ փորձեր էին արվում աերոդինամիկայի, նյութի դիմադրողականության և այլ ուղղություններով: Օդերևութաբանական լաբորատորիայում արժեքավոր նյութեր էին ստացվում քամու արագության, եղանակի փոփոխությունների վերաբերյալ: Անուանալի է աշտարակի դերը ռադիոյի զարգացման գործում: 1898 թվականին այստեղից իրականացվեց ռադիոհեռագրական կապը, 1903 թվականին հաստատվեց ռադիոկապ Ֆրանսիայի և Նավատորմի հետ, իսկ վերջին տասնամյակներին այն դարձել է նաև հեռուստա ու ռադիոաշտարակ:

Նախանձում եմ աշտարակին, քանզի այն ավելի հոյակապվոր դարձավ, քան էր, գրում էր Գ. էյֆելը կյանքի մայրամուտին:

Ո՞ւմ է պատկանում Փարիզը

Գիտե՞ք, թե ում է պատկանում Փարիզը. Ֆրանսիային, ֆրանսիացիներին, եթե ուզում եք, փարիզեցիներին, կդատասխանեք այս տարօրինակ հարցին: Այս պատասխանը ճշմարտացի կլինի միայն մասամբ: Բանն այն է, որ Փարիզ քաղաքի ողջ 105 քառակուսի կմ է նրա 77 հազար շենքերն ու շինություններն ունեն իրենց տերը: Պետությանն են պատկանում Մեն գետը, նրա ափերը, կամուրջները, նախարարությունները, բանգարանները, մի քանի պալատ, մասնավորապես Լուվրը և Լյուքսեմբուրգյան պալատը, ինչպես նաև Հաղթական կամարը և Փարիզի Աստվածամոր տաճարը: Քաղաքապետարանի սեփականությունն ավելի համեստ է. նախ էյֆելյան աշտարակը, փարիզյան ջրանցքները, Սենայի վրայի հետիոտնային կամուրջները, 13 քաղաքային թանգարան, 83 գրադարան ու մարզադաշտ:

Մնացածը՝ Փարիզն ու նրա կառույցները մասնավոր անձանց, ապահովագրական ընկերությունների ու եկեղեցու ձեռքումն են: Ֆրանսիայի մայրաքաղաքի տների կեսը պատկանում է 5 հազար մասնավորին և ընկերություններին: 150 հոգուց յուրաքանչյուրը տեր է 10 և ավելի շենքերի: Ըստ «Փարիզի շենքերի տերը» տեղեկատուի, Ֆրանսիայի ապահովագրական ընկերությունները որոնք իրենց ստացած եկամուտներն ա վանդաբար ներդնում են անշարժ գույքի մեջ, այսօր ձեռքում են կենտրոնացրել հարյուրավոր շենքեր ու շինություններ: Այսպես, «Ասյուրանս ժեներալ դը Պարի» ընկերությունն ունի 350 շենք, «Յունիոն դեզ ասյուրանս դը Պարին»՝ 10 հազար բնակարան, «Գրուպ դեզ ասյուրանս նասիոնալ»-ը՝ մոտ 1 հազար բնակարան:

Փարիզում ունեցած սեփականության առումով ապահովագրական ընկերությունների հետ կարող է մրցել միայն եկեղեցին: Նրան պատկանում է մի քանի հազար հեկտար հող, սակայն կաթոլիկ եկեղեցու կալվածքների իրական պատկերը չի հրապարակվում: Վատիկանի երկրային (այդ թվում սեփականության) գործերը տնօրինող սուրբ հայրերը չեն արտահայտվում այս հարցերի շուրջ:

Փարիզի բնակարանների երեք քառորդը հանձնվում է վարձակալությամբ: Ֆրանսիայի մասնագետների կարծիքով, բնակարանների բանկությունը մայրաքաղաքի բնակչության կրճատման պատճառներից է: Վերջին 20 տարում քաղաքի բնակչությունը կրճատվել է 600 հազարով՝ 2,8 մլն-ից 2,2 մլն:

Տ. Լ.



digitised by A.R.A.R.@

Մշակութային կյանք

Պատրիկ Տոնապետյան. «Հայ-ֆրանսիական մշակութային համագործակցությունը կայացած է»

Բազմաժամ հեռուստադիտումներ ավելի են սերտանում հայ-ֆրանսիական մշակութային կապերը: Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան և մասնավորապես մշակույթի կցորդ Պատրիկ Տոնապետյանի գործունեության մասնակցությամբ ամենատարբեր բազմաբնույթ ծրագրեր են ստեղծվում առավել ամրապնդելու այդ կապերը: Մեր զրուցակից Պատրիկ Տոնապետյանը մանրամասնում է:

«Հայ-ֆրանսիական մշակութային համագործակցությունը զարգանում է մի քանի ուղղություններով: Դրանց մեջ առաջին հերթին խոսեմ հրատարակչական գործի մասին: Մշակված ծրագրի համաձայն (որը կոչվում է «Վասան Տերյան. Օգնություն գրահրատարակչական գործին», ստեղծվել է 1993-ին և ընդգրկում է 4 հրատարակչություն), օգնություն է նախատեսվում այն հրատարակություններին, որոնք լուսավորության նպատակներ են տալիս, անշուշտ, մի դիսանների ոլորտին, ուղղյին, հեռուստատեսությանը, մամուլին օգնում ենք կարդալ ուսանողներ, մասնագետներին Ֆրանսիա գործուղելու հարցում ուսումնասիրել, որ տիրապետեն ֆրանսերենին: Թմիֆիայոց, մեր համագործակցության գլխավոր խոչընդոտը լեզվի իմացությունն է: Եվ այս տեսանկյունից Հայաստանում կարևորագույն խնդիրներից մեկը ֆրանսերենի զարգացումն է: Ուրախալի է, որ մեր դեսպանությունն ենք տալիս, անշուշտ, մի դիսանների ոլորտին, ուղղյին, հեռուստատեսությանը, մամուլին օգնում ենք կարդալ ուսանողներ, մասնագետներին Ֆրանսիա գործուղելու հարցում ուսումնասիրել, որ տիրապետեն ֆրանսերենին: Թմիֆիայոց, մեր համագործակցության գլխավոր խոչընդոտը լեզվի իմացությունն է: Եվ այս տեսանկյունից Հայաստանում կարևորագույն խնդիրներից մեկը ֆրանսերենի զարգացումն է: Ուրախալի է, որ մեր դեսպանությունը միջոցով. նաև Ֆրանսիայի մշակույթի նախարարությունն իրենց օժանդակությունը ոլիտ բերեն այս հոյժ կարևոր գործին: «Լուսանցք» հեղինակային իրավունքի ասոցիացիա. բոլի ծախսերի, նաև աշխատողների համար. բոլոր համաձայնության, ֆրանսիական կողմն է վճարում: Հույս ունեմ, որ 1996-ին բարությունը ուսուցանվելիք: Այս հրատարակության «Անանա և Միխայելի» հետ ունեմ մի ծրագիր, որը սկսել ենք «Գարուն» ամսագրի «Ասոլոն» հրատարակության հետ (մասնավոր շարունակում ենք «Ասոլոնի», մասնավոր «Անանա և Միխայելի» հետ): Նրանց խնդիրն է գեղարվեստական գրականության հրատարակումը: «Անանա և Միխայել» հրատարակությունը մեզ հատուկ ձևով է դիմել. նորատեղծ այս հրատարակության կոչումն է ամբողջովին նվիրվել ֆրանսիական գրականության բարգմանություններին: Վերջերս հրատարակեցինք շատ գեղեցիկ գրքեր Անդրե Ժիդի, Մարգերիտ Դյուրասի գործերից, հիմա Ժան Անույի դիմանկարն ենք ոստրատում («Ֆլանելի», «Անանա և Միխայելի» մասին լուսաբանիչ տես նաև 14-ոդ էջում- Ա.Հ.): «Ասոլոնը» մեր օգնությամբ լույս է ընծայել մի քանի գիրք, իսկ վերջերս հրատարակության է ուղարկել Կանդինի «Միգելիոն» ամսագիրը (բրգմ. Գրիգոր Ջանիկյան):

Հայ-ֆրանսիական մշակութային համագործակցության մեջ մեծ նշանակություն ենք տալիս, անշուշտ, մի դիսանների ոլորտին, ուղղյին, հեռուստատեսությանը, մամուլին օգնում ենք կարդալ ուսանողներ, մասնագետներին Ֆրանսիա գործուղելու հարցում ուսումնասիրել, որ տիրապետեն ֆրանսերենին: Թմիֆիայոց, մեր համագործակցության գլխավոր խոչընդոտը լեզվի իմացությունն է: Եվ այս տեսանկյունից Հայաստանում կարևորագույն խնդիրներից մեկը ֆրանսերենի զարգացումն է: Ուրախալի է, որ մեր դեսպանությունը միջոցով. նաև Ֆրանսիայի մշակույթի նախարարությունն իրենց օժանդակությունը ոլիտ բերեն այս հոյժ կարևոր գործին: «Լուսանցք» հեղինակային իրավունքի ասոցիացիա. բոլի ծախսերի, նաև աշխատողների համար. բոլոր համաձայնության, ֆրանսիական կողմն է վճարում: Հույս ունեմ, որ 1996-ին բարությունը ուսուցանվելիք: Այս հրատարակության «Անանա և Միխայելի» հետ ունեմ մի ծրագիր, որը սկսել ենք «Գարուն» ամսագրի «Ասոլոնի

ԱԶԳ

ԱՐՁԱՐԱՐԱԾ

Ֆրանսիան եւ սիյոռֆահայ նորագույն ազգային-ազատագրական պայքարը

1991-ին, երբ տպագրության ենթարկվում էր Վ. Գոդելի հայերեն ժողովածուն, գրքի առաջին էջերից մեկում որոշեցինք դնել նրա բարգմանությամբ Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Լյուքսեմբուրգում լույս տեսած հայ բանաստեղծության ժողովածուներ: Գաղտնի երգերից մինչեւ այսօր գրական ասպարեզ մուտք գործող երիտասարդ հեղինակներ: Սաղվեց տասներեք ժողովածու: Անցած չորս տարիների ընթացքում այս թիվն աճեց ու հասավ քսանի, եւ հիմնականում շնորհիվ վարելական նշանավոր հրատարակչության «Լա Դիֆերանսի»: Վ. Գոդելի եւ այս հրատարակչության համագործակցության շնորհիվ, վերջին տարիներս, իրար հետեւից լույս տեսան հայ բանաստեղծության մի քանի գրքեր՝ մեկը մյուսից ավելի լավ: Նախ տպագրվեց «Հայ բանաստեղծություն. Հինգերորդ դարից մինչեւ մեր օրերը» ծավալուն ժողովածուն, որտեղ ներկայացված էին քառասունհինգ հեղինակի ստեղծագործություններ: Անթալոգիայի տրամանանքը հինգ հազար էր, որ բավական մեծ թիվ է Ֆրանսիայի համար: Այնուհետեւ, հրատարակվեցին Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի եւ Դանիել Վարուժանի ժողովածուներ: Իսկ այս տարի լույս ոչի տեսնի Նարեկացու տաղերը եւ գանձերն ամփոփող գիրքը:

Այս վերջին չորս ժողովածուները սովորական գրքույկներ չեն: Առանձ մաս են կազմում «Լա Դիֆերանսի» նշանավոր «Օրֆե» մատենաշարի, որը գլխավորում է ֆրանսիացի մեծ գրող եւ բանաստեղծ Կլոդ Միշել Կլյոնին: Այս մատենաշարում արդեն երկու հարյուրից ավելի հեղինակ է լույս տեսել համաշխարհային գրականության խոշորագույն անուններ ներկայացված բնագրով եւ ֆրանսերեն բարգմանությամբ: Կարծում եմ, մեզ համար հաճելի դիտի լինի, որ այդ հանձարների ու տարանցների առաջադրյալի մեջ հայ Ռերթությունը ներկայացված է չորս գրքով եւ որ մոտ ապագայում այդ թիվը կարող է անել հասնել վեցի-յոթի: Վահան Գոդելը մատյիր է Նարեկացու տաղերից հետո բարգմանել Շնորհալու հանելուկները եւ Թրիկ: Մայրենի հաջողությամբ «Լա Դիֆերանս» հրատարակչությունը եւ բանաստեղծ Վահան Գոդելին: Ի դեղ, եթե նկատի ունենանք, որ դիֆերանս ֆրանսերեն նշանակում է զանազանություն, տարբերություն, ապա, բնավ չդիտնալով բառախաղ արած լինել, դիտի ամենայն լրջությամբ հայտարարենք, թե «Լա Դիֆերանս» հրատարակչությունը անտարբեր չէ մեր գրականության հանդեպ:

ԱՆԵՐՈՒՆԻ ԹՈՓՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Յուրի Ջորկաեֆ. «Հոյաrs եմ ծագմանս համար»

«Մոնակո» թիմի եւ Ֆրանսիայի հավաքականի խաղացող Յուրի Ջորկաեֆը Ֆրանսահայ համայնքի ամենաճանաչված անձնավորությունն է, որի հետ հարցազրույց ունենալը գրեթե անհույս բան է, նրա տնչափ զբաղվածության պատճառով: Այնուամենայնիվ, «բախտս բերեց»: Մոնակոյում ինձ հաջողվեց հանդիպել նրա հետ: Ջորկաեֆը սիրով համաձայնեց հարցազրույց տալ «Ազգին»:

Մեր բերքում հաճախ ենք գրել Ձեր մասին եւ Հայաստանում վաղուց Ձեր անունը հայտնի է: Հայրենիքում նման համբավը գոհացնո՞ւմ է Ձեզ:

– Ինձ համար դա հոյտատանալու աստիճանի որախություն է: Իմ բարեկամները միշտ տեղեկացնում են «Ազգում» գրված ինձ վերաբերող նյութերի մասին:

– Ձեր բազմաթիվ հարցազրույցներում, ինչպես օրինակ «Էկիպում», «Լիբերասիոնում», «Ինֆո-Մատենում», Դուք բազմաթիվ անգամ նշել եք Ձեր հայկական ծագման մասին: Ազդեցություն արել եք նաեւ «Գալաթասարայի» հետ Թուրքիայում տեղի ունեցած խաղից առաջ:

– Մայրս այրուհի է, Օհանյան ազգանունով եւ բնականաբար մանկությունս անցկացրել եմ հայկական միջավայրում: Մասնակցել եմ Լիոնի հայկական գաղութի կյանքին, ինձ զգալով որպես հայ: Այնպես որ, իմ երակներում հայկական արյուն է հոսում եւ ամեն անգամ առիթը բաց չեմ թողնում մարզական միջավայրում ընդգծել իմ ծագման մասին: Երբ Ստամբուլում «Գալաթասարայի» հետ Չեմոյիոնների լիգայի մրցաշարի խաղում գրավեցի մրցակցի դարպասը, դա ինձ շատ մեծ որախություն պատճառեց, քանի որ «Գալաթասարայը» Եվրոպական խաղերում 12 տարվա ընթացքում առաջին պարտությունն էր կրել սեփական հարկի տակ: Հոյաrs էի այն առումով, որ գիտեի ինձ հետեւում են բազմահազար իմ հայրենակիցներ, որոնց ես որախություն պատճառեցի: Բայց միաժամանակ ես հեռու եմ այդ իրադարձությանը բաղաքական բնույթ տալուց:

– Հետեւո՞ւմ եք Հայաստանի մարզական եւ հատկապես ֆուտբոլային կյանքին:

– Ինչը Հայաստանին է վերաբերում, հետաքրքրում է ինձ: Ես հետեւում եմ Հայաստանի հավաքականի եվրոպական նպատակներին եւ տեղեկություններն իմանում եմ մարզական բերքերի եւ հայկական միջավայրի շնորհիվ:

– Իսկ հիմա մասնակցո՞ւմ եք հայկական կյանքին:

– Ցավոք, ոչ: Դա ինձ եւ ծագումով ֆրանսիացի կնոջս համար մեծ կորուստ է: Ցավոք, Մոնակոյում հայկական գաղութ չի գործում: Իսկ ես, լինելով պրոֆեսիոնալ ֆուտբոլի բարձրակարգներում, ժամանակ չունեմ այցելել այլ տեղերում գտնվող հայկական գաղութներ, ինչպես օրինակ Լիոնում: Դա ոչ միայն ինձ, այլեւ կնոջս մեծ ցավ է պատճառում, քանի որ նա էլ է շատ բանով հայկական «հայկական» եւ տիրապետում է մեր ազգային պարերին, հատկապես շատ է սիրում բոչարի պարել:

– Իսկ հայերեն գիտե՞ք:

– Մանկությունս անցկացրել եմ Դեսինում Լիոնի հայկական արվարձանում: Շրջապատս հայկական էր: Հայրս մարզում էր Դեսինի հայկական Union Generale Armenian թիմը, որի կազմում խաղում էի նաեւ ես: Բայց մարզական կյանքիս ճանապարհը ինձ հեռացրեց այս հանելի սրճարանից: Մոնակոյում չլսելով հայերեն որեւէ խոսակցություն, սկսել եմ ամբողջովին մոռանալ հայերենը: Մայրենի լեզվով գրել նույնպես չգիտեմ, բայց ցանկություն ունեմ ֆուտբոլից հետո սկսել ավարտել մնացողս մեր գիրքերը: Երբ Մոնակոյում հայերենին տիրապետող որեւէ մեկին գտնեմ, հենց հիմիկվանից կսկսեմ ավարտել:

– Գոլ խփելու պահերին ի՞նչ աղոթքներ եք ունենում:

– Առաջին հերթին հիշում եմ ծնողներիս, բարեկամներիս, բազմահազար հայ ֆուտբոլասերներին, համոզված լինելով, որ բոլորն էլ անկեղծորեն ուրախանում են իմ հաջողության համար:

– Ուզո՞ւմ եք այցելել Հայաստան:

– Ո՞ր հայը չի ուզում այցելել իր նախնիների երկիրը: Ցանկությունս մեծ է, սակայն նորից եմ ուզում ասել, որ իմ պրոֆեսիոնալ մարզական կյանքի ժամանակագրությունը շատ դիպ է եւ չեմ կարող ազատորեն տնօրինել ժամանակս եւ ճամփորդել: Բայց հույս ունեմ, որ օրերից մի օր կայցելեմ Հայաստան:

– Ֆրանսիայում հայ ծագումով շատ մարզիկներ, ինչպես օրինակ Ալեն Պրոստը, իրենց հայ չեն զգում: Ի՞նչ կարող եք ասել այդ առթիվ:

– Ամեն մարդ իր գործելակերպի մեջ ազատ է: Ես ինձ հայ եմ զգում եւ այդ մասին ուզում եմ հայտնել ողջ աշխարհին: Տղայիս Միշա-Արամ կոչեցի եւ կնոջս կատարեցի հայկական եկեղեցում: Ես եւ կինս նույնպես ամուսնացանք հայկական եկեղեցում եւ հայկական հանդիսավորությամբ:

Յուրի Ջորկաեֆը հայկական շրջապատում

– Խոսակցություններ են գնում, որ ուզում եք «Մոնակոյից» հեռանալ եւ ուրիշ թիմ տեղափոխվել:

– Այսօրվա դրությամբ 50 տոկոսով մնում եմ «Մոնակոյում» եւ նույնքան տոկոսով էլ գնում եմ ուրիշ թիմ:

– Բայց դա դիվանագիտական դատապարտելի է: Խոսում են Փարիզի «Սեն-Ժերմեն» կամ Մադրիդի «Ռեալ» Ձեր տեղափոխվելու մասին:

– Շատ բաներ ճիշտ են, բայց...

– «Ազգ» թերթի, նրա ընթերցողների եւ համայն հայության մարզասերների անունից Ձեզ մաղթում ենք նորանոր հաջողություններ:

– Շնորհակալություն, իմ ողջույնները հաղորդեք Հայաստանի ֆուտբոլասերներին:

ԳԵՐՄԱՆ ԱՍՐՅԱՆ
Մոնակո
Հատուկ «Ազգի» համար

ՏԱՐԱԳԼԱՑՈՒԹՅՈՒՆ

Անրի Միշելը Կամերունից Սաուդյան Արաբիա եւ ետ՝ Ֆրանսիա

ԱՏԱԲԱ. ԲՈՅԱՋՅԱՆ
Փարիզ

Արաբական երկրներում եվրոպական օրենքները հետու են ժողովուրդների սովորություններից եւ մարդկանց վերաբերմունքներից: Այս խոսքերն այսօր վաստակաբար պետք է լինեն Ֆրանսիայի ֆուտբոլի հավաքականի նախկին մարզիչ Անրի Միշելի մտքում: Երբ Ֆրանսիայի հավաքականի մի շարք անհաջողություններից հետո, 5 տարի առաջ, Անրի Միշելն ստիպված էր հրաժարական տալ, նա շրջեց փոքր եւ մեծ թիմերում: Մինչեւ 1994 թ նրա հետքերը տանում էին Կամերուն: Անրի Միշելը գլխավորում էր այս երկրի հավաքականը: Հենց Ֆրանսիացի մարզչի գլխավորությամբ Կամերունի հավաքականը մեկնեց ԱՄՆ-ի աշխարհի առաջնությանը: Սակայն աֆրիկացի ֆուտբոլիստները չկարողացան կրկնել 1990 թ. Իտալիայի աշխարհի առաջնության հաջողությունները: Հավաքականը, ներ ին խրտվիլների պատճառով, չկարողացավ դրսեւորել իր բոլոր կարողությունները: Էքզոտիկական (ազգային) հոգի վրա թիմի մի խումբ ֆուտբոլիստներ մյուսների դեմ էին: Անրի Միշելն աշխարհի առաջնությունից հետո ստիպված լինց Կամերունը, իր բախտն այս անգամ փորձելով Սաուդյան Արաբիայում: Նա մարզում էր այս երկրի ա մենալավ թիմերից մեկը՝ «Ալ Նասրը», եւ ամսական ստանում 15 հազար դոլար: Այս երկրներում նավթային դոլարներն իրենց բանակությամբ անաղարտի ավազներից հիշ չեն: Բայց Անրի Միշելի վիճակը Սաուդյան Արաբիայում էլ բարդացավ եւ դարձյալ թիմի անհաջողությունների պատճառով: Սաուդացիները արագորեն գտան հանցավորին: Դա Անրի Միշելն էր: Նրանց վկայությամբ, Անրի Միշելը մարզումների էր ներկայանում խմած վիճակում: Նրա խաղային տակտիկան լավը չէր: Բայց այսքանով խնդիրը չվերջացավ, քանի որ սաուդցիները Անրի Միշելի միայն հրաժարականը չէին պահանջում, այլ դրա հետ, միասին ուզում էին վերջին երկու ամսվա աշխատավարձը (30 հազար դոլար) եւ ճամփորդության տոմսի արժեքը, որպեսզի նրան ուղարկեն Ֆրանսիա: Անրի Միշելը նման շատ տաժերի դեմ ստիպված էր բողոքել, բայց իզուր: Այս երկրի խաղատեղիների իրավունքները շատ ավելի մեծ են, քան օտարներինը: Իսկ եթե որեւէ թիմի դեմ կավարներից մեկը պատկանում է Ֆեյսալ բաղավորական ընտանիքին (նրանք բազմահազար են), խնդիրն ավելի բարդ է դառնում, եթե ոչ անլուծելի: Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք էր Ռիադում «Ալ Նասր» թիմի դեմ կավարները հյուրանոցում 7 շաբաթով կալանավորեցին Անրի Միշելին: Միայն Ֆրանսիական դիվանագիտության բարձր պատասխանատուների միջամտությամբ իշխան Ֆեյսալ Բեն Ֆահդ Բեն Աբդել Ազիզը, որը թագավոր Ֆահդի որդիներից մեկն է, հարցը վերջնականապես լուծեց:

Անրի Միշելի ոդիսականն, անցնելով Կամերունի անտառներով եւ Սաուդյան Արաբիայի անապատներով, վերջ գտավ Ֆրանսիայում:

ՆԱԽԱՄՐՐՈՒԹՅՈՒՆ

Ժակ Շիրակը սումոի սիրահար



Ֆրանսիայի նոր նախագահ ընտրված Ժակ Շիրակն ընդհանուր առմամբ մեծ մարգասեր է: Նա հատկապես շատ է սիրում ճապոնական սումո մարգաձեւը: Վերջերս Ժակ Շիրակը Ֆրանսիա էր հրավիրել Ճապոնիայի ամենահայտնի սումոտորներին, որոնց քաշը անցնում է 130 կգ-ից: Մրցումները տեղի ունեցան Փարիզի «Բերսի» հանրահայտ մարզահամալիրում: Ճապոնիայում սումոտորներին դասում են իբրեւ կիսաստվածների: Նրանք, երբ բոլորի են անցնում, արդեն միլիոնատերեր են լինում: Ո՞րն է սումոտորների ծանրության գաղտնիքը: Նրանք դեռ 5-6 տարեկանից դասրասվում են այս մարզաձեւին եւ օրական ճաշում են 6-7 անգամ: Իսկ մարդկությունն ի՞նչ է շահում սումոտորների անմարդկային դասրասությունից:

ՃԱՆԱՉՈՒՄ

Կանանց ֆուտբոլը տղամարդկանց ճանապարհի՞ն

Ֆրանսիայի կանանց ֆուտբոլի հավաքականի մարզիչ Էմմե Մինիոնը հայտարարում է, որ իր դասընթացն ավելի վստահելի է, քան Ֆրանսիայի տղամարդկանց հավաքականի մարզիչ Էմմե Ժակեի դասընթացը: Երկու մարզիչներն էլ կրում են Էմմե անունը, որը լավ նշան է: «Կանանց դարաշրջանները տղամարդկանց դարաշրջանների նման են: Գնդակը նույն գնդակն է, խաղային տակտիկան նույնպես: Տարբերությունը միայն կանանց հոգեբանության հետ է կապված: Կանայք տղամարդկանցից ավելի շուտ են բորբոքվում, եւ եթե ընկերուհիների ներկայությամբ որեւէ մեկի հասցեին ծանր խոսքեր են հնչում, ապա վերջիններս շատ են նեղվում: Կանանց միջեւ արագորեն ի հայտ են գալիս խմբեր (մաֆիոզ), որոնք դայտարում են ուրիշ խմբերի դեմ», ասում է Էմմե Մինիոնը: Այսօր Ֆրանսիայի ֆեդերացիայում արձանագրված են 25 հազար կին ֆուտբոլիստներ: Գնալով նրանց թիվը կտրուկ մեծանում է: «Ամեն օր կանանց ֆուտբոլը որակական աճ է ապրում», հայտարարում է Ֆրանսիայի կանանց հավաքականի մարզիչը: ԱՄՆ-ն իր 4 միլիոն ֆուտբոլիստուհիներով իշխում է աշխարհի կանանց ֆուտբոլի վրա: 1991 ին տեղի ունեցած աշխարհի առաջնությունում հաղթեցին հենց ամերիկացիները, որոնք դասրասվում են երկրորդ անգամ նվաճել աշխարհի չեմպիոնի կոչումն առաջիկա հունիսին կայանալիք աշխարհի առաջնությունում: Կանանց ֆուտբոլն ընդհանուր առմամբ ուռաջընթաց է ապրում ամբողջ մոլորակում: Այսօր աշխարհի առաջնությունից զատ կա նաեւ եվրոպայի առաջնություն: Իսկ 1996 ին Ատլանտայում կայանալիք օլիմպիական խաղերի ծրագրում կանանց ֆուտբոլն էլ ընդգրկված կլինի: Ամենեւին զարմանալի չի լինի, որ մի գեղեցիկ օր ստեղծվեն նաեւ երկսեռ թիմեր, ի շահ սպորտի, ի շահ մարդկության եւ բնակչության աճի:

ԲԻՉՆԵՍ

ՈՒԵՖԱ-ն կորցրեց իր Չեմպիոնների լիգան

Դեռ մինչեւ վերջերս շատերն այն կարծիքին էին, որ գանձերը գտնվում են պեղումներում, ավերակների մեջ կամ հին ժամանակներից ծովերում խորտակված նավերում: Բայց այն, ինչ վերջերս դասահեց Ֆրանսիայում, փաստում է, որ առյուգայում գանձերը դեսք է փնտրել նոր մարզերում եւ ավելի շատ այն տեղերում, որ, թվում է, որեւէ բան գտնելու ոչ մի հույս չկա: Ուշադրությամբ կարդացեք այս հետաքրքիր դասությունը: Մազոզ եւ Կարբոն անուններով երկու ֆրանսիացի առեւտրականներ, որոնք, ի դեպ, համագործակցում են Էրիկ Կանտոնայի հետ, ուզում էին մարզաբաղիկներ վաճառի հանել, որոնց վրա գտնված լինի ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի տարբերանշանը (լոգոն): Դրա համար նրանք դիմեցին եվրոպական INPI (նախագանությունների դասատանության ազգային ինստիտուտ) գրասենյակին, որը զբաղվում է ընկերությունների տարբերանշանների, նրանց մոդելների, անունների դասատանության հարցերով եւ տրիբունային արգելում է գործածել դրանք: Ամենուրեք տարբեր ապրանքների վրա կարելի է տեսնել Champion, Champions record, Championship Wimbledon, Top Champion, US Champion ընկերությունների անունները: Բայց վերջիններիս մեջ բացակայում է Չեմպիոնների լիգայի անունն ու տարբերանշանը: Բացակայում է հենց վերջինը: Ինչպես դասատանում, քանի որ այդ անունը օգտագործելու իրավունքը գնվել է ճարտիկ առեւտրականների կողմից: ՈՒԵՖԱ-ն մոռացել էր իր կողմից կազմակերպվող մրցաշարի Չեմպիոնների լիգայի անունը եւ տարբերանշանը դասատանել դասատանության գրանցելով եվրոպական վերոհիշյալ գրասենյակում: Մազոզը եւ Կարբոնը 1994 ի օգոստոսի 26-ին շատերին Չեմպիոնների լիգայի անունը եւ լոգոն վաճառեցին INPI-ի ֆրանսիական կազմակերպությունում:

Զարմանալի մի երեւույթ, քանի որ այս երկու ֆրանսիացիներին է դասկանում Չեմպիոնների լիգայի անունն ու տարբերանշանը վաճառելու իրավունքը: Երբ որեւէ միություն կամ կազմակերպություն ցանկություն ունի գործածել Չեմպիոնների լիգայի անունը կամ տարբերանշանը, դարտավոր է նախ եւ առաջ դիմաներ վճարել նրա սեփականատերերին ֆրանսիացի վերոհիշյալ վաճառականներին: Նույնիսկ եթե ՈՒԵՖԱ-ն փորձի գործածել իր կողմից հիմնադրված մրցաշարի անունն ու տարբերանշանը, դետք է արտոնություն ստանա Մազոզից եւ Կարբոնից: Իսկապես այս բացթողումը մի մեծ հանցանք է ՈՒԵՖԱ-ի ղեկավարների կողմից: Օրինակ, «Եվրոդա-96»-ը դասատանված է նման խնդիրներից, քանի որ ժամանակին գրանցվել է հիշյալ կազմակերպությունում: Մի խոսքով, ՈՒԵՖԱ-ն կորցրել է իր Չեմպիոնների լիգայի անունն ու տարբերանշանը: Սա վկայում է, որ այն, ինչը թվում է անհերեւակայելի, կարող է լինել հնարավոր եւ կարելի: Մնում է ավելացնել, որ երկու ֆրանսիացիներ, որոնք ՈՒԵՖԱ-ի մեղքով սեփականացրին Չեմպիոնների լիգայի անունն ու լոգոն, դետք է դառնան միլիոնատերեր:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՀՀ ԳԱՎԱԹ

Քաջային կարգերը տարբեր էին

Երևանի «Արարատը»՝ երրորդ անգամ անընդմեջ ՀՀ գավաթակիր

ՍՈՒՐԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ

Այս անգամ ՀՀ գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպումներին հատուկ անհաս և լարված մրցակցություն չսացվեց: Հայաստանի Հանրապետության գավաթի խաղարկության նախորդ երեք եզրափակիչների համեմատ սա «ամենամեղմ» հանդիպումն էր: Քաջային կարգերն իրոք անհավասար էին: «Արարատը» բացահայտ ուժեղ էր մրցակցից, և հավանաբար ոչ ոք չէր կասկածում նրա հաղթանակին: Երեսի դրսևորվ ոդեմ է բացատրել, որ այս անգամ ցանկալիորեն ֆիզ բվով հանդիսականներ ներկայացան հանդիպմանը: Արարատցիները հեշտությամբ հասան իրենց նպատակին և երրորդ անգամ անընդմեջ նվաճեցին գավաթը: 13-րդ րոպեին դարգաղես «սուկածային» գոլ գրանցվեց «Կոտայքի» դարպասում: Հարձակմանը միացած Լեռն Ստեփանյանը տուգանային հրապարակի ձախ կողմից «անմեղ» փոխանցում կատարեց դարպասապահի հրաժարակ: Արովյանցի երեք ֆուտբոլիստներ գարմանալիորեն խանգարեցին իրար: Գնդակն էլ, ի դժբախտություն «Կոտայքի», իրար ետևից դիտչկով աբովյանցի մի խմբի ֆուտբոլիստների, հայտնվեց դարդասում: 26-րդ րոպեին ևս գեղեցիկ գոլի հեղինակ դարձավ Հայկ Հարությունյանը, որը ձախ թևից ստանալով Արմեն Շահգելդյանի փոխանցած գնդակը, այն գլխի հարվածով ուղղեց դարդասը: 42-րդ րոպեին ամենատական մարդեսությամբ աչքի ընկավ Համլետ Մխիթարյանը, որը սառնարտանն և ոչ ուժեղ հարվածով հաշիվը դարձրեց 3-0: 75-րդ րոպեին արարատցիներից աչքի ընկավ նաև Հակոբ Տեր-Պետրոսյանը: Թվում էր, խոսքը հաշիվն անհասանելի է: Սակայն խաղադրը մեկ րոպեի ընթացքում, այսպես ասենք, երկու անգամ II մեհրանոց հարվածի իրավունք ձեռք բերեցին և 2 անգամ էլ այն անվրեպ իրագործեցին արարատցի Կարեն Բարսեղյանը: Ի դեպ, նա դարձավ գավաթի եզրափակիչ հանդիպումների գլխավոր ռմբակոծը: Բարսեղյանի անվան դիմաց արդեն գրանցվել է երեք գոլակ: Մեկը նա անցյալ տարի խփել է «Արարատի» կազմում: «Կոտայքի» համար գրանցվեց դարձվոր արդյունք: Սակայն դրանից տարաձորությունը չխաթարեց եզրափակիչի մասին չվիճվեց: Կուզենայի ընդգծել ուշադրավ մեկ հանգամանք: Երևանի «Արարատին» և Հայաստանի հավաքականին մարզում է նույն անձնավորությունը՝ Սամվել Դարբինյանը: Ինչպես հայտնի է, հավաքականի կորիզը կազմում են «Արարատի» խաղացողները: Սակայն բիրտ մեղադրանքներ չեն հնչեցվել: Ամենայն դեպքում, ոչ ոք չի ասի, թե Դարբինյանը ինչպես պետք է խաղացնի հավաքականի խաղացողներին: Ամենայն դեպքում, ոչ ոք չի ասի, թե Դարբինյանը ինչպես պետք է խաղացնի հավաքականի խաղացողներին: Ամենայն դեպքում, ոչ ոք չի ասի, թե Դարբինյանը ինչպես պետք է խաղացնի հավաքականի խաղացողներին:

«Արարատ» Երևան-«Կոտայք» Աբովյան՝ 4-2 (3-0): Երևան, 28 մայիս, «Հրազդան» կենտրոնական մարզադաշտ: Մրցավարներ՝ Գեորգ Հովհաննիսյան, Սլավա Ղազարյան, Կարեն Նալբանդյան:

«Արարատ» - Հարություն Աբրահամյան (Արմեն Պետրոսյան, 77), Արմեն Շահգելդյան, Տիգրան Գասպարյան, Արամայիս Տոնոյան, Լեռն Ստեփանյան (Արթուր Քոչարյան, 70), Արա Միգոյան, Հակոբ Մկրյան, Հակոբ Տեր-Պետրոսյան, Համլետ Մխիթարյան, Սեւադա Արզումանյան, Հայկ Հարությունյան (Արամ Ոսկանյան, 77):

«Կոտայք» - Էդվարդ Երիցյան (Արմեն Հովհաննիսյան, 46), Վահրամ Հովհաննիսյան, Վահան Արզումանյան, Գագիկ Հովհաննիսյան, Ալբերտ Աֆյան (Վաղինակ Խաչատրյան, 46), Վահե Յաղմուրյան, Սամվել Սարգսյան, Կարեն Բարսեղյան, Արթուր Ջիգարջյան (Լեռն Սարգսյան, 42), Ռոբերտ Միրզոյան, Արթուր Փափազյան:

Գոլերը՝ Էդվարդ Երիցյան («Կոտայք», 13, սեփական դարդասը), Հայկ Հարությունյան («Արարատ», 26), Համլետ Մխիթարյան («Արարատ», 42), Հակոբ Տեր-Պետրոսյան («Արարատ», 75), Կարեն Բարսեղյան («Կոտայք», 85 եւ 86 րոպեներ, երկուսն էլ՝ II մեհրանոց հարվածներով):

մեր խաղում են տարբեր տակտիկական խաղառձերով ի վնաս հավաքականի: Օրինակ, գավաթի եզրափակիչ խաղում արարատցիների գրոհները կազմակերպվում էին տարբեր ուղղություններով և մեծ ուժերով: Հարձակմանը մասնակցում բոլոր ֆուտբոլիստներն առանց գնդակի տեղաշարժերով ձգտում էին ազատ գոտիներ ստեղծել: Նույնը չեն կարող ասել հավաքականի գրոհները: Սակայն հետո ճշտություն կատարվեց, և առաջին գոլի հեղինակ դարձավ Հայկ Հարությունյանը, որն առաջինն էր գրավել մրցակցի դարդասը: Նրան և Հարություն Աբրահամյանին, որը ճանաչվեց լավագույն դարդասապահ, ՀՌԱԿ-ի մրցանակները հանձնեց նախկին ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ Ֆրունզե Դոլիարյանը: Երկու լիսը մրցանակակիր դառնար: Սակայն հետո ճշտություն կատարվեց, և առաջին գոլի հեղինակ դարձավ Հայկ Հարությունյանը, որն առաջինն էր գրավել մրցակցի դարդասը: Նրան և Հարություն Աբրահամյանին, որը ճանաչվեց լավագույն դարդասապահ, ՀՌԱԿ-ի մրցանակները հանձնեց նախկին ԽՍՀՄ և Հայաստանի ժողովրդական արտիստ Ֆրունզե Դոլիարյանը: Երկու

1995 թ. ՀՀ գավաթակիր Երևանի «Արարատը»

Մարտիրոսյան Արմեն-ՊՊՀ

ի մասին: Համոզված եմ, որ շատերը կարող են ասել, թե մրցակիցները նույնը չեն, և համեմատությունը տեղին չէ: Սակայն խաղադրը ոչեմ է սկզբում դառնա անկախ մրցակիցներից ժամանակակից ֆուտբոլում առանց ակտիվ հարձակողական ոճի հնարավոր չէ հաղթել: Հանդիպումը մեր մրցանակ էր ասենք նաև «Հայաստան» ֆիրման, մենք ամենակրոնիկ խաղացողի, մյուսը նաղթող բիմի համար: Վերոհիշյալ ֆիրմայի տնօրեն Մուշեղ Սոֆիասյանը մրցանակները հանձնեց «Արարատ»-բիմին և Հակոբ Մկրյանին: Երկու բիմերից հանդիպման լավագույն խոսողներ ճանաչվեցին Սեւադա Արզումանյանը («Արարատ») և Վահան Արզումանյանը («Կոտայք»), որոնց մրցանակներ հանձնեց «ԻՄԱԿ» հայկական համատեղ ձեռնարկությունը:

ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմենակ Սարգսյանը Գյումրիի «Շիրակի» և Հայաստանի Ազգային հավաքականի խաղացող Հարություն Վարդանյանին պարգևատրեց ֆուտբոլի միջազգային կարգի հայ առաջին մրցավար Խաչատուր Բոյաջյանի անվան մրցանակով, որն անցյալ տարվա արդյունքներով ճանաչվել էր Հայաստանի ամենաազնիվ ֆուտբոլիստը:

Շնորհավորելով Երևանի «Արարատին» հերթական հաջողության համար, հույս ունենանք, որ մեր անվանի բիմը իրավունք կստանա Հայաստանը ներկայացնել եվրոպական մրցաշարերում:

Նախորդին խորհրդակցություն տեղի ունեցավ ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի դեկավարների և ակումբների նախագահների մասնակցությամբ: Ուշագրավ առաջարկով հանդես եկավ ֆեդերացիայի նախագահ Արմենակ Սարգսյանը: Որոշվեց, որ հանրապետության չեմպիոնի և գավաթակիր հանդիսացող ակումբի դեկավարությունը հենց այս տարվանից անցկացվի սուպերգավաթի խաղարկություն: Այն կխաղարկվի մեկ հանդիպումով և կանցկացվի Երևանում: Ժամկետները կճշտվեն:

Քաջային կարգերը տարբեր էին

Կիրակոս ՄՈՒՐԶԱՅԻՆ

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երևան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1850

ՇԱԽՄԱՏ

Ռաֆայել Վահանյանը մեկնարկեց խաղաղ արդյունքներով

Նովգորոդում մեկնարկել է «Պարոն Մեծ Նովգորոդ» անունը կրող և արդեն ավանդական դարձած շախմատի միջազգային խոշորագույն մրցաշարը, որն ընդգրկված է Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի «Մեծ մրցանակի» խաղարկության ծրագրի մեջ: Առաջին նմանատիպ մրցաշարն այս տարի տեղի ունեցավ Ռիգայում, որը միաժամանակ նվիրված էր աշխարհի նախկին չեմպիոն Միխայիլ Տալի հիշատակին: Ինչպես հայտնի է, այդ մրցաշարում հաղթեց Պրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովը: Մրցաշարին մասնակցում են Ռիգայում հանդես եկած գրեթե բոլոր շախմատիստները, բացառությամբ Վիշվանաթան Անանդի, որը սկսել է նախապատրաստվել Կասպարովի հետ աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղին: Նրա փոխարեն Նովգորոդի մրցաշարում հանդես է գալիս բուլղարացի երիտասարդ տաղանդավոր գրոսմայստեր Վասիլին Թոփալովը:

Մրցաշարին, ինչպես եւ Ռիգայում, մասնակցում է նաեւ երեւանցի գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը: Նա առաջին երկու տուրերում իր հանդիպումներն ավարտել է ոչ-ոի:

Ահա տեղի ունեցած հանդիպումների արդյունքները.

1-ին տուր	
Գուլկո-Կասպարով	0-1
Իվանչուկ-Յուսուպով	1-0
Շորբ-Կրամնիկ	1-0
Վահանյան-Թիման	0,5-0,5
Էլվես-Թոփալով	0,5-0,5
2-րդ տուր	
Կասպարով-Իվանչուկ	0,5-0,5
Թոփալով-Յուսուպով	1-0
Վահանյան-Գուլկո	0,5-0,5
Շորբ-Էլվես	0,5-0,5
Կրամնիկ-Թիման	1-0

Երկու տուրից հետո առաջատարներն են Կասպարովը, Իվանչուկը, Շորբը և Թոփալովը, որոնք վաստակել են 1,5-ական միավոր: Վահանյանի արդյունքն է մեկ միավոր:

ԿԱՊԵՐ

Միշել Իդալգոն «Օլիմպիկի» փրկարա՞ր

Ֆրանսիայի հավաքականի նախկին մարզիչ Միշել Իդալգոն, որի գլխավորությամբ ֆրանսիացիները 1984-ին նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի կոչումը եւ որը 1986-ից մինչեւ 1992-ը մեծ հաջողությամբ մարզում էր Մարսելի «Օլիմպիկը», ուզում է նորից վերադառնալ Մարսել: Նա այս մասին հայտարարել է «Մոնտե Կարլո» ռադիոկայանով: Միշել Իդալգոն ասաց, որ «Օլիմպիկը» նրան ֆինանսական ծգնաժամից դուրս բերելու համար «ֆուտբոլի աշխարհից» իր տուրքն է հավաքել խելացի, պարտաճանաչ եւ վստահելի անձնավորություններ: Այս հայտարարությունը հավանաբար Բեռնար Տապիի դեմ է, ինչի որ «Օլիմպիկից» առաջ նա հայտարարեց, որ իր կողմից ունի մի միլիարդատեր եւ Սաուդյան Արաբիայի հավաքականը ֆինանսավորողներ, որոնք պատրաստ են Մարսելի «Օլիմպիկի» ֆինանսները փրկել: Բայց շտապով պետք է պարզվեր, որ Միշել Իդալգոյի «միլիարդատերը» կիսլեն կինկարոը, մի սատխոս է եւ կեղծ միլիարդատեր, որն ամեն տեղ պարտքեր ուներ եւ կանաղական կառավարությունը նրան փնտրում էր կալանավորելու համար («Ազգը» գրել է այդ մասին): Այնպես որ, Միշել Իդալգոյի եզրակացությունը նույնպես կարող է ջուրն ընկնել:

Միշել Իդալգոն մեր հայրենակից Ալբերտ Արոբանյանի մտերիմ ընկերներից մեկն է, որին պատկանող «Դոմեն դը Տուրնո» հրաշակերտ մարզավանում վերջին տարիներին նա ֆուտբոլային սեմինարներ է կազմակերպում մասնակցելով ֆրանսիական ֆուտբոլիստների համար: Ինչպես հայտնի է, Միշել Իդալգոն նախապես համաձայնություն էր տվել որպես խորհրդատու օգնել Հայաստանի հավաքականին, սակայն բազմազբաղ մասնագետի համար այդ անելն այնքան էլ հեշտ չի լինի, քանի որ նրա համար գայթակղիչ հրավերները շատ շատ են: Անցյալ օգոստոսին, երբ Հայաստանի հավաքականը նույն մարզավանում նախապատրաստվում էր Բելգիայի հավաքականի հետ Բրյուսելում կայանալիք եվրոպայի առաջնության առաջին խաղին, Միշել Իդալգոն մեծ ուշադրությամբ հետևում էր մեր գլխավոր բիմի մարզումներին: Մեր զրույցի ժամանակ (Ս. Բ.) նա ընդգծեց, որ տղաները տեխնիկապես լավ են պատրաստված, սակայն տակտիկական եւ ֆիզիկական պատրաստականության բարելավման համար հակայական աշխատանք է պետք կատարել: Դա միանգամայն ճշմարտություն է, եւ մեկ տարի անց էլ օրվա գլխավոր խնդիր է մնացել:

Միշել Իդալգոն Ալբերտ Արոբանյանի մարզավանում

ՖՈՒՏԲՈԼ

Որտե՞ղ կխաղա Երիկ Ասատուրյանը

Ֆուտբոլասերները տեղյակ են, որ Ֆրանսիայի առաջին դիվիզիոնի առաջնությանը մասնակից բիմերում հանդես են գալիս հայազգի յոթ ֆուտբոլիստներ: Դրանցից մեկն է Երիկ Ասատուրյանը, որը խաղում է «Լիլ» բիմում: Ասատուրյանը հարձակվող է եւ հաջող է անց կացնում ավարտվող ֆուտբոլային մրցաշրջանը: Այսօր Երիկ Ասատուրյանի արտերքները լավ բարձրացել են եւ նրան շատ բիմեր են ուզում հրավիրել իրենց մոտ: Խոսակցություններ են գնում «Կաննի», «Լանսի», «Ստրասբուրգի» եւ «Լը Հավրի» մասին:

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԸ

Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության՝ 22. 05. 1995

digitised by A.R.A.R.@